

Spencer's penmanship



# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅԻԶԻԳԱՅ ՊԾՂՈՍ ՊԱՏՈՒԵԼԻՈՅՆ

Ի ՊԵՏՍ ԳՊՐՈՑԱԿԱՆԱՑ



ՈՐՈՑ ՎԵՐԱՅ ՆԱԵԻՍ ՅԱԻԵԼԱԻ


ՑԵՂԱԿԱՆ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐԻՆ

ՀԱՏՈՐ Ա.

ՀՐԱՄԱՆԱԻ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՑ




Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ԲԻՐԻՇՃԵԱՆ

— 1876 —

A  $\frac{1}{15050}$



Յիզիզայ պատուելւոյն Տրամաբանութեան հեղինակութիւնը շատ ընդարձակ ըլլալով, նորա տպագրական ծախուց ծանրութեանը համար մինչեւ ցարդ անտիպ թողուցած էի, սպասելով բարեպատեն՝ առթի մը, որպէս զի նորա բնադիրը ամբողջօրէն հրատարակեմ:

Սակայն ժամանակը իւր քաղցր ժպիտը ի տեսիլ դժնեհայեաց փոխելով, մեր բսլոր յոյսը ի դերեւ հանեց. նաեւս ասկից ետքն ալ չկայ յոյս մը, որ գուցէ ինծի ձեռնտու ըլլալով, իմ փափաքիս հասցնէ:

Ուստի առ այժմ տպագրական ծախուց՝ միանգամայն եւ գնողաց ալ դիւրութիւն մը տալու համար, դանի հատոր առ հատոր պիտի հրատարակեմ, ի պէտս դըսրոցական ուսումնասէր մանկուոյն Հայոց, որոյ երջանկութեանն փափաքող ի սրտէ, մնամ բարեացապարտ սիրելի Ազգիս,





# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԻՆՉ

ՀԱՄԱՌՈՑ ՅԵՂԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՃԻՋԻԳԱՅ ՊՕՂՈՍ ՊԱՏՈՒԵԼԻՈՅՆ

ՍԿՍԵԱԼ ՅԱՄԷ ՏԵԱՌՆ 1603



Պաւլոս և Մեղքիսեղ հակաթոռ կաթողիկոսաց շնորհիւր՝ Շահապպաս Պարսից շահը շատ զօրքով Հայաստան վաղեց, զոր անտէր գտնելով բոլոր քաղաքները ու գիւղերը, ուր որ բնակիչք կան՝ պարէններովը մէկտեղ այրեց ու ածխն դարձուց. և ամեն բնակիչներն որոնք ազգաւ Հայ էին, տարաւ Արարատ գաշտը լեցուց, որպէս զի զանոնք ի Պարսկաստան քչէ:

Բայց երբոր լսեց թէ Տաճկաց կողմէն բազմաթիւ զօրքով Սինան սպարապետը իր վրայ կուգայ գերիները ձեռքէն կորզելու և Հայաստանէն զանի վճռնտելու համար, վախցաւ և սպառնալեօք սաստիկ հրաման հանեց զօրապետներուն, որ շուտով գերիները Երասխ գետէն անդին անցնեն: Եւ ամեն զօրապետք սոյն անիրաւ հրամանին հնազանդելով՝ սուրբքով ու բիրբերով ժողովուրդը խօշտանդէին, որ արտօրնօք գետէն անդին անցնին: Թշուառ ժողովուրդը՝ այս անակնկալ բարբարոսական հրամանը լսելուն պէս, զիրենք երկիւղը ու սարսափը պատեց, որով այլայլած իրարու վրայ լինալով՝ ամենքն ալ գետը թափեցան, և գետը զանոնք

իրբև զկրկուտ անարդել առաւ տարաւ , և հա-  
ղիւ հաղ հարիւրէն մին ի ցամաք ելաւ , կրսէ  
պատմութիւնք որոնք որ ձիերու պոչէն ու նաւ-  
կիկներու ճոթէն բռնած էին , և միւսները մատ-  
նեցան ի կորուստ :

Այս պատերազմական գործողութիւնը երբեմն  
միջահատելով ու երբեմն շարունակելով , երբ  
հասաւ 1612 թուականը , Շահապալաս պատե-  
րազմը դադրեցուց , չէ թէ պատերազմին վերջ  
տալու համար , այլ զօրացը ու զօրապետացը հա-  
մար , որոնք պատերազմին երկարանալուն վրա-  
յօք կը տրանջային : Ուստի նոցա սիրար նորէն  
շահելու համար , հրաման կընէ չորս ամիս յԱս-  
պահան տօնահանդէս կատարել և հացկերոյթ  
տալ յարքունուստ :

Տօնահանդէսին վերջանալուն երեք օր մնա-  
ցած , Շահապալաս մեծամեծաց հետ սեղանա-  
կից կըլլայ . ուր շատ զուարճանալով , կսկըսի  
ամենուն առջին պարծենալ , թէ իրմէ առջին-  
ները ոչ այսպիսի պայծառ յողթութիւն մ'ըրած  
ունին , ոչ ալ այսքան հարստութիւն գիզած են :

Այս միջոցիս նստող աւագ խաներէն մէկը  
թաղաւորը՝ Հայկազուն Մելիք Շանին<sup>(1)</sup> դէմ<sup>(2)</sup>

---

(1) Հոս (2) (հ)ի տեղ առնուած է :

(2) Այս Մելիք Շանը Երասխ գետին հիւսիսային  
վերի կողմը կը բնակէր , կըսէին , վեց հարիւր ծառա-  
ներով երկրագործութիւն ու վաճառականութիւն ընե-  
լով , շատ հարստացեր է : Շահապալաս այն կողմերը  
չէ գացեր : Այս պատմութիւնը ասկից յիսուն տարի



կը գրգռէ ու կըսէ, Արքայ, Մելիք շանը՝ որ  
Երասխ գետին հիւսիսակողմը կը բնակի, քեզ-  
մէ շատ հարուստ է: Ասի Շահապպաս երբոր կը  
լսէ, շուտ մը անոր երկու պատդամատար կը  
խրկէ, ըսելով թէ Շահապպաս քեզի հետ տես-  
նուիլ փափաքելով, քանի մ'օրէն ետև կուզէ  
հոս գալ. ահա զմեզ առաջուց խաւրեց որ քե-  
զի իմաց տանք:

Միւս առտուն չիլուսցած քսան հազար զօր-  
քով ճամբայ կեղնէ առանց միջոց տալու, որպէս  
զի զանի անպատրաստ դռնելով, անհնազան-  
դութեան պատրուակով անոր տունը ջնջէ, ու  
հարստութիւնը յափշտակէ, ելլայ երթայ:

Ընդհակառակն ամեն բան պատրաստ կը դըռ-  
նէ, և Մելիք Շանին ցրցուցած միամիտ ու ան-  
կեղծ ծառայութեանը նայելով, անոր հետ սրբ-  
տանց կապուեր է, և այնուհետև իւր բարեկա-  
մութիւնը կսկսի անոր ցուցնել: Եւ Շահապպաս  
հոն իր զօրքովը ամիս մը մնացեր է, և վերջին  
օրը Շահապպաս կերակուրի վրայ Մելիք Շանին  
կը հարցնէ: Դուն շատ հարուստ ես: Այո՛, ար-  
քայ, կըսէ: Ո՞րչափ է արդեօք քու հարստու-

---

առաջ տղայութեան ատենս լսելուս համար, մինակ  
այսքանը միտքս մնացեր է: Զալալեան Սարգիս եպիս-  
կոպոսին խօսքին նայելով, այս Մելիք Շանը որ Ֆի-  
զիգային պապուն պապն է, հոն յետոյ Պարսիկներէն  
եւ ուրիշ ազգերէն ալ անհանգիստ ըլլալով, Գարա-  
պազ գաղթեր է, ու հիմայ անոր ցեղը Շահնազարեան  
կըսուի:

Թիւնդ : Մեւիք Շանը կը պատասխանէ , իմ չափէս աւելի արքայ : (և այս միջոցիս երկուքն ալ սեղանէն ելած՝ դէպ ի դեռին եզերքը դացած կըլլան) Միթէ դեռին սա վաղած ջուրը կրնայ ետ արդիլել : Մեւիք Շանը կըսէ , արքայ , տուր հրաման ծառայիցդ , որոնք դեռնափորէն հանելով , թող կամուրջին առջին լեցնեն :

Արքան հրաման կուտայ , և ծառաները ամաններուն բերանը բաց պարպելու ասեն՝ Շահապպաս զանոնք կարգիլէ ու կըսէ , քորձերուն բերանները կապեցէք ու այնպէս լեցուցէք :

Քորձերը երբոր ջրէն վեր կը բարձրանան , թագաւորը կըսէ՝ բաւական է : Եւ ասոնք ալ առէք և սեղը տարէք : Մեւիք Շանը թագաւորին կաղաչէ , արքայ , կըսէ , տուր հրաման որ ասոնք զօրացդ բաժնուին . և այնպէս սոյն հըսկայ հարստութիւնը Շահապպասայ զօրացը կը բաժնուի :

Ահա այս կերպով կըսէին , Մեւիք Շանը զօրաց սիրտը շահելով՝ անոնց համակրութիւնը գրաւեց , որով թոյլատուութիւն չեղաւ Շահապպասին , որ իր դիտաւորութիւնը Մեւիք Շանին վրայ կատարէր :

Շահապպաս ասով անոր հետ աւելի սիրով կապուելով , անոր երկու որդիքը (որոնց անունները մոռցած եմ) կառնու , մէկը զօրացը զօրապետ կընէ , ու միւսն իրեն վաճառականը :

Այս երկու եղբարքը ոչ միայն Շահապպասայ , այլ և մինչև նորա յաջորդ Շահսէֆիին թագա-

ւորութեան տասներորդ տարին՝ հաւատարմաբար ծառայեր են ։

Այս միջոցիս Գահմազ Գուլի խանը, իւր տիրոջմէն ապստամբելով պատերազմեր է, և յաղթելով Շահսէֆին մեռուցեր, ու ինք անոր տեղ շահ նստեր է ։

Այս երկու եղբարքն՝ որոնց բնակութեան տեղին Ասպահան ըլլալով, և քանի մը տարուան ալ կարգուած, մէկը բնաւ զաւակ չունի եղեր, միւսը երկուորեակ զաւակ ունեցեր է . առ ահի խոյս տալու ասեն, երկու եղբարք իրարու իմաց չտալով, որդի ունեցողը տղին մէկը հոն կը թողու, ու արտօրնօք միւս ազան կառնէ ու կը փախչի . իսկ միւսը՝ որ նա ալ պատրաստ էր փախչելու, եղբօրը կանուխէկ փախչելէն անտեղեակ ըլլալով, իրիւ վերջին հրաժարականը անոր տալու մտօք՝ կը մտնէ անոր սենեակը, որ փաթթուած տղեկէ մը զատ մէկը չտեսներ, ոչ կուլար դառնադին . այս սրտաճմկիկ տեսարանը զանոնք քայլ մ'անդամ՝ առնելու չ'թողուր, ու սարսափմամբ մը իրենց արտասուքն ալ տղուն արտասուացը հետ խառնելով, ու զանի իրենց կենաց փրկութեան հրեշտակը ընդունած՝ կառնուն ու ուղղակի յիղմիր կը փախչին ։ Ահա այս տղուն անունը Պօղոս է եղեր, որ Ֆիզիզային պապն է, և այս պատահեր է Ռ.Ղ. 1640 թուականին ։

Պօղոսին հօրեղբայրը արդէն վաճառական ըլլալով, հոն ալ վաճառականութիւն ընել սկսեր է ։

Երբոր Պօղոսը մեծցած ու քաջ կտրիճ ըլլալը տեսնելով, գեղէ գեղ ու քաղաքէ քաղաք պըտըտիլը անոր կը յանձնէ, ու ինք յիշմիր կը կենայ : Եւ երբոր դործերնին լաւ մը կը կարգադրեն, և այն ատենն ալ Պօղոսին ամուսնութեան ժամանակն հասած տեսնելով, իրենց հետ մէկտեղ գաղթողներուն մէկունն աղջիկը անոր հարս կառնու . և այսպէս քանի մը տարի ալ յիշմիր կենալէն ետքը, զանոնք ի Գըրգաղաճ գիւղաքաղաքը կիջեցնէ, որ շատ բարեբեր երկիր մ'է և վաճառատեղի . հոն եկեղեցի մը ու քովն ալ մէկ գպրոց մը շինել կուտայ, և հոն կը բնակին, որպէսզի ասով գեղերը պտըտելու իրենց գիւրութիւն մը ըլլայ :

Եւ հոն կունենայ երեք որդի, Սիմօն՝ որ Ձիւղիգ այլին հայրն է, Թագիկ ու Պետրոս :





# ԿԵՆՍՍ.ԳՐՈՒԹԻՒՆ

## ՅԻՋԻԳԱՅ ՊՕՂՈՍ ՊԱՏՈՒԵԼԻՈՅՆ

ՈՐ ԾՆԱԻ 1788 ԹՈՒԻՆ Ի ԳԸՐԳԱՂԱՃ

Ֆիզիքան ի Գրքագղած տղայութեան ատենը թէպէտև կերթեւեկէ ի դպրոց, բայց հոն առած ուսման ճաշակին վրայ դժգոհ ըլլալով, կուղեւորի յիզմիր, և Տէր Օհան վանանգեցի քահանային աշակերտ կըլլայ, յուսալով թէ գիտութեան համար սրտին մէջ եղած ուսման ծարաւութեան բարբոքը անկից կընայ զովացնել, և այն ատեն ինք 17 տարեկան կըլլայ :

Սակայն ըստ իր վկայութեան, հոն երեք տարուան տուած աշխատութեան ապարդիւն ըլլալը տեսնելով, կը սլարտաւորի ի մեծն Պօլիս գաղթելու, և կուգայ իբրև սանդուխտ առանց օգնականի միայնակ, և այս ատեն կըլլայ ինք քսան տարեկան :

Սոյն ատենուան գանուած սրատուելիներուն առանց ձանձրանալու միշտ կը յաճախէ :

Բայց այս երեք տարուան շարունակութեանը մէջ, առանձին առանց մէկը գիտնալու, բնական գիտութեան վրայօք (Բնագիտութիւն) վորք ըլիկ գիրք մը հեղինակեր է, որուն մէջ Ֆիզիքան Քրիստոնէական կրօնից ճշմարտութիւնը բնականէն հաստատեր է : Նոյն միջոցին փէշամալճեան Գրիգոր սրատուելին համբաւ հանելուն համար,

էն վերջը անոր ալ դիմեր է , կարծելով թէ իր ունեցած դաղափարներուն վրայ աւելի լուսաւորութիւն մը կստանայ անկէց :

Առաջին դասախօսութեան մէջ Գրիգոր պատուելին կը տեսնայ թէ իր պարզած խնդրոյն վրայօք՝ Ֆիզիգային տուած բացատրութիւնը աւելի պարզ և աւելի բացայայտ է . անմիջապէս այս դէպքը Պօղոս (Անդրիանուպօլսեցի) սրբազանին կը պատմէ : Պօղոս սրբազանը ասի երբոր կը լսէ կը զարմանայ , և նոյն շարթուն օր մը որոշելով՝ Ֆիզիգան ի Պատրիարքարան կը հրաւիրեն , և նոյն որոշեալ օրը ի դիմնականաց պղտիկ խմբիկ մը կազմելով , ի ներկայութեան յիշատակաց արժանի Պէղազ Յարութիւն ամիրային կը քննեն . որով ժողովը վերահասու կըլլայ թէ՛ այս բարձր ուսմունքը ու դիտութիւնը անոր բնական է , և ոչ թէ ստացական . մանաւանդ բնադիտութեան նոր հեղինակութեամբը : Ժողովը անոր բերնէն ելած պատասխաններուն հաւնելով , և այս հեղինակութիւնն ալ տեսնելով , հօն կը վկայեն թէ ասի մեր ազգին մէջ հաղուադիւտ մէկը պիտի ըլլայ , զի ի ցոյց ճշմարտութեան բերած ապացոյցները Ֆիզիգայէս է , զոր չենք կրնար ուրանալ : Ուստի ժողովը հօն միահաւան ըլլալով , «Ֆիզիգայ» պատուանունը անոր կը յատկացնէ . որմէ սկսելով մինչև ցարդ մեր ազգայնոց մէջ սովորութիւն եղած է նորա մականունը Ֆիզիգայ կոչուելու : Այն ատեն ինք քսան երեք տարեկան եղած կըլլայ :



Բարեյիշատակ Պէղազ Յարութիւն ամիրան՝  
ասիկայ այսպէս տեսնելով, Ֆիզիքան կառնու-  
իւր ասպարանքը կը տանի ի վարժապետութիւն  
քրոջ որդւոցը ։

Հոն բաւական տարի կենալէն ետքը, կը հրա-  
ժարի անկից, և այն ատեն ինք երեսուն և եր-  
կու տարեկան կըլլայ ու կերթայ յիզմիր, իր  
մայրենի քաղաքէն անցնելով, և անկից ուղղա-  
կի յերուսաղէմ կերթայ ։

Եւ երբ Եգիպտոսի փոխարքային գործակա-  
տար Պողոս պէյը անոր յերուսաղէմ դալը կը  
լսէ, զՖիզիգան յեգիպտոս կը հրաւիրէ . Ֆիզի-  
գան կերթայ, և հոն քիչ մ'ատեն հիւր կենա-  
լէն ետքը՝ նորա անօրէնութեամբը յիզմիր կը  
դառնայ, հոն վարժապետական պաշտօն վա-  
րելու համար ։ Հոն ալ երկու տարիի չափ կե-  
նալէն ետքը՝ կը դառնայ ի Պօլիս . և անմիջա-  
պէս Պէղազ Յարութիւն ամիրան՝ զանի Միջա-  
դիւղի դպրոցը հայկաբան կը դնէ ։

Հոն ալ երկու տարիի չափ կը կենայ, և երբ  
կը տեսնէ թէ Ազգին մեծամեծաց մէջ խռովու-  
թիւն կայ, ձեւով մը անկից ալ կը հրաժարի .  
և նոյն միջոցին Մատթէոս կաթողիկոսէն՝ որ  
այն ատեն ի Պրուսայ առաջնորդ էր, հրաւեր  
դալը տեսնելով կերթայ ի Պրուսայ <sup>(1)</sup> ի վար-  
ժապետութիւն . հոն ալ երեք տարիի չափ կե-

---

(1) Հոն տուած քննութեան խօսած ճառին բնագիրը  
զեռ քովս կեցած է, զայն ալ պիտի հրատարակեմ ։

նալէն եւքը՝ անկից ալ կը հրաժարի, և կերթայ դարձեալ յԵրուսաղէմ ի վարժապետութիւն Ս. Ռւխտին միաբանութեան, Պօղոս սրբազան Պատրիարքին յատուկ հրաւիրանաց նամակաւն, որուն մէջ Ֆիզիգայ պատուանունէն զատ, ուրիշ պատուանուն մ'ալ աւելցուցեր է «Շնորհալի» մականունելով, (դժբաղդարար նամակը սնտուկէն կորսուելով, չկրցինք զանի ալ հրատարակել), որ Նորին սրբազնութիւնը Երուսաղէմի պարտուց համար հոն գացած էր :

Եւ հոն Ֆիզիգան տարի ու կէս կենալէն եւքը՝ դարձեալ ի Պօլիս կուգայ, և ի Չուգուրխան սենեակ մը վարձելով, հոն շուկայի արհեստաւորաց տղայոցը ու երբեմն ալ կատարեալ մարդոց դասաւուսութիւն ընել կսկսի :

Ահա հոն յաջորդեց այն սարսափելի, անիրաւ, տարասլարտ և Ազգին արատ բերող աքսորը, որ եղաւ 1839 ապրիլ ամսոյն •

## ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՔՍՈՐԱՆԱՅ ՖԻԶԻԳԱՅԻ

Այն ժամանակները մեր Ազգին մէջ ետութեան դժտութիւն մ'իյնալով, Ազգը երկուքի բաժնուեցաւ. մին լուսնայափոխներու խումբն էր, և միւսն արհեստաւորաց :

Այս երկու բաժանմունքը՝ իրարու արեւակցութիւնը, ազգայնութիւնը, ազգականութիւնը մէկգլխի թողլով, մէկզմէկու այնպէս կերեւէ,

ին՝ ինչպէս արեւը լուսնոյ , բարին չտրին , լոյսը խաւարին :

Լուսնոյ փոփոխութիւններուն ժողովատեղին էր ի Մեծն Նոր խան , իսկ արհեստաւորաց՝ ի Պէշիկթաշ Պալեան կարապետ ամիրային տունը :

Պատահաբար շարժանիքներ

Առաջին . Ստեփան Պասրիարքն՝ որ Աղունի կըսուէր , արհեստաւորներէն աւելի լուսնոյ փոփոխութիւնն ունկնդիր կըլլար ու անոնց մօտիկ կընէր , և զանոնք անոնցմէ աւելի կը մեծարէր :

Երկրորդ . կրօնական դասուն թոյլտուութեամբը՝ Բրօթէստանդ ազանդոյն շուտով մեր Ազգին մէջ տարածուիլն եղաւ :

Այս դժտութիւնը աւելի արծարծելով՝ սկըսան իրարու թշնամական ցոյցեր ալ տալ . և ասի այսպէս բորբոքելով , զնաց մինչև Տէրութեան ականջը հասաւ : Տէրութիւնն ալ Ազգը խաղաղեցնելու համար , վսեմ Պալեան կարապետ ամիրան կանչելով Ազգին կառավարութիւնը անոր յանձնեց . որ զանոնք հայրաբար խրատելով իրարու հետ հաշտեցնէ :

Նա ալ՝ որ բնութեամբ հաշտասէր ու խաղաղասէր միանգամայն ազգասէր ըլլալով , գործը ուղեց որ խաղաղութեամբ լմնցնէ . ատոր համար իւր խմբին փոքրէնութեամբը արքունի հրովարտակով՝ Սերաստիայի առաջնորդ Յակոբոսեպիսկոպոսը ի Պօլիս բերել տալով , նախ փոխանորդ , երկու շաբաթէն ետքը նորա տեղ Պատրիարք նստեցնել տուաւ :

Նորաստեղծ Պատիւարքը երախտադէտ մտօք  
քանի մ'օրէն ետքը՝ ի Պէշիկթաշ կարապետ ամի-  
րային տունը եկաւ . ի տեսութիւն . և Ամիրան  
անոր գալուտեանը վրայ ուրախանալով՝ շնորհա-  
կալ եղաւ . որոյ աղագաւ Նորին սրբազնութեան  
ամեն բանի մէջ օգնական ու թիկունք ըլլալու  
ալ խօսք տուաւ . մանաւանդ Բրօթէստանդ ա-  
ղանդոյն տարածման առաջը առնելու՝ եթէ  
փոյթ տանի :

Աւրկէց անխուսափելի կերպով աքսորանաց  
գաղափարը գոյութիւն առաւ : Եթէ գուք այդ-  
պէս ըլլալ հարկ կը համարիք , ըսաւ Ամիրան ,  
գուք աքսորանաց տրժանիները ըստ անուան  
նշանակելով որոշեցէք , ես պատրաստ եմ կա-  
ռավարութենէն հրովարտակներ հանել տալ :

Մոյն շնորհակալեաց տեսակցութեան ատեն՝  
Չամուրճեան պատուելին իր մասնաւոր արբա-  
նեկաց խմբովը (որոնց անուններն յիշատակելը  
ուրիշ պատեհ առթի մը կը թողում) հոն պատ-  
րաստ գանուելով հանդիսատես կըլլար . և կը  
խրախուսէր զանոնք : Ուստի անոնք ալ այս ա-  
նարդարանալի պաշտօնը անոր յանձնեցին : Որ  
ըստ հրամանի և ըստ իւր բնատուր ձրիցն՝ ար-  
բանեակներուն հետ մէկտեղ խմբելով , աքսո-  
րանաց անունները մէկ ցուցակի մը մէջ ամփո-  
փեցին ու պատրաստեցին , և ճշողկազարդի կի-  
րակի իրիկուն խմբովին Ամիրային տունը օթե-  
ւանեցին , որպէսզի ընտրողական ցուցակը Նո-  
րին վսեմութեանը ներկայացնեն :



Յետ ճաշին՝ առանձին սենեակ մի քաշուելով, աքսորելոց անունները նորա առջին կարգացին, առանց յիշատակութեան Ֆիլիզայի անունն ։

Ամիրան անոնց կը հարցնէ՝ թէ ո՞ր է Ֆիլիզային անունը, որոյ վրայօք ինծի միշտ կամբաստանէք ։


Ասոնցմէ մէկը՝ (ասոր ով ըլլալը հիմայ թող մնայ) կը պատասխանէ, այո՛ Ամիրայ, անոր անունը այս ցանկէն գուրս հանած եմք ։ Ամիրան ասոր պատճառը կը հարցնէ, նորէն կը պատասխանէ թէ՛ Ֆիլիզան ուրիշ արատ մի ալ վրայ աւելցուցած է ։ Ի՞նչպէս, կը հարցնէ Ամիրան ։ Ֆիլիզան կը դաւանի եղեր՝ թէ Գրիստոնեսայք պաշտեն երեք Աստուած, հեթանոսք բազում Աստուածք, Հրէայք մի Աստուած, իսկ Ֆիլիզայս անաստուած ։

Երբոր Վսեմափայլ Ամիրան՝ այս զրպարտանաց խօսքը անոնց բերնէն որ կը լսէ, զորոնք (1) որ հաւատարիմ՝ միանդամայն և ճշմարտարան ճանչցած ըլլալով, առանց տարակուսանաց անոնց կը հաւատայ. և հրաման կընէ շուտով Սրբաշան Պատրիարքին նամակ մը գրել, այս օրինակ ։

«Սրբաշան Հայր ։

«Ի հասանիլ գրոյս առ Ձերդ Սրբազնութիւն, ։

(1) Ա. կայսղներուն մէջ վարդապետ, քահանայ, պատուելի և մեծարու աշխարհականներ որ ըլլան, սրգօք տարակուսութիւն կը վերցնէ ։



«փութացուսցես ձեռքակալել զՖիղիզայն, և ա-  
«ռանց խօսելոյ ընդ նմա՝ փակեացես զնա ի ներ-  
«քին բանտն մահապարտաց ի Պատրիարքարան :  
«Սմեռայն բարեխօսութիւնք քեզ զնմանէ ան-  
«լսելի լիցին, մինչև հասցէ քեզ գիր աքսորա-  
«նաց նորա» :

Այս նամակը առտուն չը լուսցած՝ Սրբազա-  
նին ձեռքը կը հասնի :

Անմեղ Ֆիղիզայն՝ այս ամեն բանէն անտեղ-  
եակ, նոյն գիշերը Գուզկունճուզ Բիշմիշեան  
հաճի Չէլէպի Յովհաննէս աղային տունը հիւր  
ըլլալով, առտուն կը փութայ ի Պօլիս Չուգուր  
խան իր սենեակը, սենեկին դուռը բանալու չը  
մնար, Մարգար ժամկոչը գլխուն վերեւը կը  
անկուի, և կըսէ. Սրբազանը քեզ կուգէ :

Ֆիղիզայն անոր հրամանին հնազանդելով,  
դառնուկի պէս առջին ինկած՝ կուգայ ի Պատ-  
րիարքարան. բայց առանց և ոչ մէկը տեսնելու,  
ըստ հրամանի նամակագրին՝ Մայր եկեղեցւոյ  
ներքին բանտը, ուր մինակ մեռելոց ճաղերը  
կան, ու մահապարտ անձինք հոն կը ձգուին.  
որ քարուկիր փոքրիկ լուսանցքով շէնք մ'է.  
խեղճ Ֆիղիքայն՝ առանց հարցուփորձի իբրեւ  
զմահապարտ հոն կը փակեն :

Որ ամենուն աղէկութիւն ընել կը փափաքէր  
և ճշմարտութիւն կը քարոզէր :

Յիրաւի ոչ միայն ամեն բարեխօսութիւն նո-  
րին սրբազնութեանը անլսելի եղաւ, այլ և Պետ-  
րոս առաքելոյն այն սքանչելի խօսքն ալ որ կը-



սէ . «Եթէ մարդկան հաճոյ լինէի , Քրիստոսի ծառայ ոչ էի» : Բայց միայն ի շնորհս Ս . Զատկի , Աւագ հինգշաբթին բանտարկութիւնը ի Պատրիարքարան փոխադրուեցաւ :

Սոյն միջոցիս թէ զՖիզիզայն և թէ նորին մը տերիմ բարեկամներն՝ որ բազմաթիւ էին , նենգութեամբ մը տնտնեցնելու համար , (որ դեռ արքայանայ հրովարտակը իրեն ձեռքը հասած չէր) , նորա հեղինակութիւններն ուղեցին ի քրննութիւն : Ընդ որ Ֆիզիզայն ուրախանալով , թէ ճշմարտութիւնը երեւան պիտի ելլէ , ու իրեն անմեղութիւնը պիտի ճանչցուի կարծելով , զիս կանչեց ու սենեկին բանալին ինծի տուաւ ու ըսաւ , ա՛ռ սա , գնա՛ սենեակս բաց , ուր որչափ հեղինակութիւնք ու գրութիւնք կան՝ մինչ թղթի կտորներն ալ առնես , բերես և Սրբազանին տաս . ( որ այս միջոցիս Ֆիզիզային հետ երեսանց բարեկամացեր էր ) : Սակայն հետո ալ երկու սպասաւոր դրին ի զգուշութիւն :

Իմ ձեռքովս բերուած հեղինակութեանց անունները հետեւեալներն էին . թող զբազմութիւն թղթոց ու գրութեանց :

1. Խթան զարթուցիչ .
2. Թարգման ճշմարտութեան .
3. Բանալի գրոց .
4. Ներածութիւն հաւատոյ .
5. Հայելի ճշմարտութեան .
6. Պատկեր վարժութեան .
7. Հրաւէր իմաստութեան .

8. Տեսարան զուարճալի.
9. Կերակուր հոգւոյ .
10. Պատմութիւն ժողովոյ .
11. Հայերի վարուց .
12. Բանալի եկեղեցւոյ .
13. Բնախօսութիւն յաշադս անմահութեան հոգւոյ .
14. Ներածութիւն հաւատոյ ընդարձակ .
15. Խորհուրդ աշխարհի դոյացական խմորման .
16. Տեսիլ լուսոյ :

Վերջապէս Ֆիղիդային ճակատը դրոշմուած աքսորին հրամանը՝ անդարձ ու վճիռը անջրելի ըլլալուն համար, Զատիկին առջի շարժուն ուրբաթ առտուն Ֆիղիդային ողջունեցին, ի կեսարիա ի վանս Սրբոյն Կարապետի բարի ճանապարհ մաղթելով. և նոյն յետոյն ոստիկանը հրաման տուաւ յիւսկիւտար անցնելու, որուն յանձնուած էին Թէպէտե յիւսկիւտար շուտով անցան, սակայն Ֆիղիդայն շատ տկար ըլլալուն համար՝ նոյն գիշերը յիւսկիւտար տաճկի մը տուն կեցան, և առտուն մութուն զանոնք<sup>(1)</sup> ճամբայ հանեց ոստիկանը հայհոյանօք, ոչ միայն աքսորեալը՝ այլ և աքսորողն ալ. զի Ֆիղիդան չափէն աւելի տկար էր :

Աքսորուելէն 15 օր ետքը՝ քանի մը բարեկամաց դրդեւելովը դայի ի Պատրիարքարան, և Նո-

---

(1) Տէր Սահակեան տիրացու Յովհաննէսն ալ՝ Ֆիղիդային հետ աքսորուեցաւ .

րին սրբազնութենէն գրեանքը պահանջեցի . և նա դրոց ուր աեղ ըլլալը անդէտ ըլլալով, զիս Ստեփան սրբազանին խրկեց, որ դեռ ի Պատրիարքարան կը գտնուէր . որմէ ի պահանջելն մեր, նորին սրբազնութիւնը խորունկ հառաչանօք՝ այս խօսքը մեզի ուղղեց :

« Ես ու Սրբազանը, Յակօր վարդապետը որ փոխանորդն էր . . . և այլն եղբօրդ հեղինակութիւններն առինք կարդացինք, մէջը շատ պատուական բաներ կային, մինչև անգամ Շնորհալին այն բերանները չէ կրցեր ընելու» : Ուստի Ստեփան սրբազանը ախօր դիմօք Յովսէփ վարդապետը կանչելով՝ հարցուց անոր . ոչ միայն Յովսէփ վարդապետը՝ այլ ամենքն ալ, որոնք ի Պատրիարքարան էին, չդիտեմք նորին սրբազնութեանը պատասխանեցին : Եւ այսպէս ամեն հեղինակութիւնք և այլ բազմութիւն գրոց ի կորուստ մասնուեցան, և սոցա հեղինակն ալ աքսորեցաւ ի կեսարիայ :



## ԴԱՐՁ ՖԻԶԻԿԱՅԻ ՅԱՒՍՈՐԱՆԱՅ Ի ՊՕԼԻՍ

1839 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ֆիզիգայն հասաւ ի Պօլիս, բայց հեղինակութիւնքն առնա ոչ դարձան ի կորստական աքսորանաց, ուստի շատ ցաւեցաւ . աքսորանաց կսկիծը խեղճին վրայ կրկնապատկեցաւ, անմխիթար լացաւ, մինչև իսկ անկողին ընկաւ . մանաւանդ Բանալի Եկեղեցւոյ հեղինակութեան

վրայ, որոյ մեծութիւնը նարեկին կրկինն էր, թէ որ աքսորը վրայ չդար, տպել պիտի տար :

Սակայն բարեկամաց յորդորանօքը ու քաջալերութեամբը քիչ մը ոգի առնելով, դարձեալ Ազգին սիրոյն համար դրիչը ձեռք առաւ, իւր ըղբղին մէջ բնաձիր տոկոսաբեր քանքարը՝ իբր զդանձ ծածկեալ արտայայտելով, ուզեց ի վաճառ հանել ի վարժս դպրոցական ուսումնասէր մանկուոյն Հայոց, նոցա սիրոյն ոչինչ խնայէր երբէք, այլ ցանկայր միշտ լինել նոցա օժանդակ ի զարգացումն իմաստութեան :

Յետոյ կրօնական ժողովոյ անօրէնութեամբը ժառանգաւորաց դասատու կարգեցաւ ի Վէղիբխան Ս. կարապետի սենեակը. բոլոր քահանայացուները ուսմունք սովբելու համար հոն կուգային, և հոն միանգամայն լսարան ալ հաստատելով, օրուան մէջ ժամանակ որոշած էր : Շուկայացիներէն շատերը կուգային ու ունկնդիր կըլլային, և շատ կուրախանային : Որովհետեւ բրօթեստանդ աղանդը մեր Ազգին մէջ նորարծարծուած ըլլալով, հաւատոյ վրայ շատ տեսակ խնդիրներ կառաջարկէին. բայց Ֆիզիգայն ամենուն ալ պատասխանը կուտար, ըստ պահանջման Ս. Աւետարանի ողջամիտ վարդապետութեան : Ոմանք ալ այլ և այլ նիւթերու վըրայօք հարցմունք կուղղէին, Ֆիզիգայն իւր քաղցր բնաւորութեամբը ամենուն հարցմանց պատասխանը տալով ամենուն սիրտը կը շահէր ու կուրախացնէր :



Յեւոյ Ազգային Ժողովոյ անօրէնութեամբը  
դնաց ի Մուշ, ուր այն ատեն քաղաքական խը-  
ռովութիւն մը ընկած էր, զայն հանդարտեցը-  
նէ, ու խաղաղութիւնը հաստատելով, Մշոյ  
վանքը նստի, ու միաբաններուն ուսմունք սով-  
ընցնէ: Եւ այս տեղի ունեցաւ 1848 թուին:

Եւ հոն երեք տարի մնալէն ետքը՝ ի Պօլիս  
դարձաւ 1851ին: Եւ այս անգամ՝ Սլի վաշա  
խանը սենեակ մի վարձելով, չափահասակնե-  
րուն դաստիօսել, ու այլ և այլ սկզբունքներու  
վրայ գրքեր հեղինակել սկսաւ:

Եւ այնպիսի նիւթերու վրայ կը մտածէր, որ  
գիտես թէ ինք ի վաղուց անտի վանոնք գիտէր,  
թէ անոնք բնութեան ծոցին մէջ ծածկեալ  
գանձի մը պէս թաղուն կեցած էին: Զորոնք  
անգամ մը Անգղիացի իմաստասէրք լսելով զար-  
մացան, որոնց առաջին առարկաներն էին ցո-  
րենին ու դարիին իրարմէ ունեցած գոյութեան  
լսմորման տարբերութիւնը. ու միւսը՝ արեղա-  
կան ու լուսնոյ, և այլ բաղմածիւ նիւթոյ. ու-  
րոնք արեւելեան պատերազմին պատճառաւը  
հոս գտնուելով, Տէր Մինասեան Միւսիւ Յա-  
կոբին (որ քաջ անգղիագէտ ըլլալով, անոնց ա-  
ռաջին թարգմանն եղած էր) միջոցովը ուզեր  
էին Ֆիզիգային հետ տեսնուիլ, որպէս զի ինչ  
ինչ նիւթերու վրայօք անոր հետ խօսակցին:

Անգղիացիք իրենց հարցման պատասխանին  
վրայ զարմանալով, Միւսիւ Յակոբին կը հարցը-  
նեն թէ ասոր թանգարանը ո՞ր է:

(Եւրոպացիք այնպէս համոզուեր են թէ մէկը առանց թանգարանաց փխլխտփայ չը կրնար ըլլալ . անոր համար Ֆիզիկային հարցուցած են թէ՛ ո՞ւր է քու թանգարանդ .)

Երբոր Ֆիզիկայն թարգմանչին միջոցով անոնց խնդիրը կիմանայ , մատով անոնց ցուցնելով կը պատասխանէ թէ՛ ահա՛ տիեզերքն է . ընդ որ անդդիացիք զարմանալով , «ուէ՛» կըսեն :

Ահա նորէն Ֆիզիկային հնարած հեղինակութիւններուն անունները , որոնք անկորուստ դեռ մնացած են իմ քովս :

1. Տրամաբանութիւն ընդարձակ .
2. Տրամաբանութիւն կրօնական գիտելեաց վրայ .
3. Մատեան օրինաց ընդարձակ , 142 երկար յօդուածներով .
4. Խորհուրդ աշխարհի ընդարձակ .
5. Տրամաբանութիւն գործնական ընդարձակ .
6. Վէպ Աւետարանի .
7. Հայելի ճշմարտութեան .
8. Գոյութիւն մտաց և գաղափար .
9. Բանավճիռ ի հինգ հազարաց ( թէպէտ ասիկայ մեռած օրը սենեակէն կորսուեցաւ , բայց երեք հազարի չափ բնագրէն քովս կեցած է , թէ որ կորսուածը ձեռքս լինայ , իսկոյն տակել կուտամ ) .
10. Հրաւէր իմաստութեան , փոքրիկ 2 հատ .
11. Ատենարանութիւն իմաստասիրական ի գպրոցս .



12. Տախտակ մի կրօնական գիտելեաց, ուր կը ցուցուի գաղափարաց ճշմարտութիւնները, արական իգական սեռի վերացեալ, բնութեան հակադրութեանց միջոցովը .

13. Տախտակ մի գոյացութեան բնական իրաց վեց դարի վրայ բաժնելով .

14. Տախտակ մի ըզլզին շղերովը, որ մտաց բոլոր շարժմունքներուն ներգործութիւնը կը ցուցնէ :

. . . Եւ այլ բազմութիւ այլ և այլ նիւթերու վրայ գրուածներ հատուած հատուած :

Ասոնք հետզհետէ միտք ունիմ հրատարակելու, եթէ արդոյ Ազգայինք սոյն մեր աշխատութիւնը պսակելով, քաջալերութիւն տան : Ֆիզիգային յօգուտ Ազգին աշխատութեան արդիւնքն մինակ այսքան եղած չը նկատեն արդոյ Ազգայինք, այլ արժանայիշատակ Պէզճեան Յարութիւն ամիրային սիրտը Ազգային եռանդով բորբոքին ալ Ֆիզիգային միջոցովը եղաւ . որով այսքան ազէկութիւններ յառաջ եկան, որովհետեւ բաւական տարի անոր քով վարժապետութիւն ըրաւ :

Հուսկ ուրեմն՝ Ֆիզիգայ բազմարդիւն վարժապետն Հայոց, իւր անունը շնաշխարհիկ երկասիրութեամբ անմահացնելով, խեղճ վիճակով իւր մահկանացուն կնքեց ի հասակի 68 ամաց 10 Յունիս 1855, Ալի փաշա խան, և թաղեցաւ ի Պալըզլը ի Տէր Գրիգորիսի թաղն :

Սոյն հրատարակեալ Տրամաբանութեան վրայօք՝ մեր կողմէն առ ընթերցողս ի տեղեկութիւն գուղնաքեայ զեկուցում մը կը տրուի ։

Քաջահամբաւ Ֆիզիզային արդի երկասիրութիւնը , որ յիւր ճակատն Տրամաբանութեան անունը կրելով կը հրատարակուի , առջի բերան տյնպիսի նիւթերու վրայօք դասեր կուանդէ , զոր ընթերցողը՝ թէ որ նա քաջակիրթ մէկն ըլլայ , այնպէս կը կարծէ թէ ասի Տրամաբանութիւն չէ . զի նորա ոգին իւր նպատակին չ'ծառայեր , այլ՝ այլ և այլ գիտութեանց և արհեստից վերաբերեալ նիւթերու վրայօք խօսող հեղինակութիւն մ'է ասի , կըսէ ։

Վասնզի ամեն գիտութիւն ու արհեստ իրենց յատկացեալ առարկաներն ունին , ասպա ուրեմն ամենն ալ կը պարտաւորին իրենց վերաբերեալ նիւթերու վրայօք խօսիլ , ու չէ թէ խառն նիւթոց ։

Զի հեղինակութիւն մի , որ աւանդէ թէ բառերը ի՛նչ և քանի՞ տեսակ են , և ի՛նչ կերպով կը փոխուին , և փոխուելովն ի՛նչ նշանակութիւն կունենան , և բառերը ի՛նչ կարգով ու կանոնով իրարու քով համաձայն կը շարուին , որով մարդկային խօսքը կը կազմուի , ահա այսպիսի ուսմունք աւանդողին կըսենք Քերականութիւն ։

Հեղինակութիւն մի՛ որ իւր ճիգն թափէ ջունկնդ-իրը համոզելու ու տարհամոզելու և կամ գոյլելու ու պարսաւելու . . . և այլն , կերպ կերպ վարպետական ձեւերով , ու տեղը և ժամանակը շնտրելով , անոր ալ կըսենք ճարտասանութիւն :

Հեղինակութիւն մի՛ որ զօրէ կանոնական օրինօք համեմատեալ ընդ նախընթացին , ծանուցելովք զանժանօթս յառաջ բերէ , անոր ալ Տրամաբանութիւն կըսենք :

Իսկ սա չունի այն յատկութիւնը , զոր Տրամաբանութեան դիտութիւնը ունի :

Ուստի ասիկայ Տրամաբանութիւն չէ , ոչ ալ Աստուածաբանութիւն , ոչ ալ Բնագիտութիւն , ոչ ալ Հանգաբանութիւն , ոչ ալ Աստղաբաշխութիւն , ոչ ալ Երկրաչափութիւն , ոչ ալ Հոգեբանութիւն և այլն , որոնց վրայօք մի և նոյն հեղինակութեան մէջ երկար յօդուածներով կը խօսի :

Արդարև ասիկայ ըստ երեւոյթին և բազմազան առարկայից ծանօթութեանն , զոր Ֆիզիզայն Ֆիզիզական օրինօք ճոխագոյնս քննադատութեամբ մը կը տրամաբանէ , որոնք միանգամ մեր զգայութեան ներքև կ'իյնան . ի վերոյիշեալ արհեստական ու գիտութեան հանգամանաց և յատկութեանց տարբեր է . բայց ոչ օտար իմաստասիրական մակայութենէն , զոր Ֆիզիզայն քան զնախնի իմաստասէրս լիազոյնս կանոնական օրինօք ըստ նախագոյ արարածականաց արարչագործ սրբութեանն ճոխացուցեալ պերճացուցեր


է . և այն պարզ և մէկին՝ ամենեցուն դիւրմբ-  
բրոնելի , այնպէս՝ որպէս թէ Ֆիզիգայն ան-  
ձամբ Աստուածային արարչագործութեան անդ-  
ներկայ գտնուած ըլլար : Որուն թէպէտև պէտք  
էր՝ նորա ըստ կերպարանաց հեղինակութեան  
յատկութեանը նայելով , ֆիլիսոփայութիւն ըս-  
ուիլ , զի անիկայ իբրև ֆիլիսոփայութիւն հան-  
դիսացեր է , քան թէ Տրամաբանութիւն , որոնց  
տիրապէս և իշխանաբար ի քննութիւն մտնե-  
լուն համար . որովհետև բոլոր զգալիք ֆիլիսո-  
փայութեան գիտութեան առարկայ եղած են :

Այս բոլոր առարկայ եղածներն՝ որոնք բնա-  
կան ու բնազանցական գաղափարներ կրսուին , զոր  
ֆիլիսոփայութիւնը կը ձեռնարկէ թէ ի ժխտումն  
և թէ ի հաստատութիւն , թէ հանգամանաց և  
թէ յատկութեանց կողմէն յառաջ բերած ըս-  
տուգութիւնը տրամաբանական կանոնաց վերա-  
ծելուն համար , Ֆիզիգայն ասոր անունը Տրա-  
մաբանութիւն գրեր է . որով հեղինակը ըսել  
ուզեր է թէ , քաջ դաստիարակի պէս իւր սի-  
րական սանուն կամ համբակին ձեռքէն բռնած  
դոյնզգոյն բիւրազդի հոտաւէտ ծաղիկներով  
զարդարուած չքնաղատեսիլ բուրաստանի մը  
նման , այլ և այլ գիտութեանց՝ որ մտաց սրու-  
թեանը կը նպաստեն , քիչ քիչ զանի ընտելացը-  
նելով , պիտի տանի ի բուն իսկ ձեռնարկն ֆի-  
լիսոփայութեան , նորա սրտին մէջ ուսման ե-  
ռանդը բորբոքել տալով հանդերձ : Ձի չըլլայ  
թէ իւր իմաստութեան սերմունքը իւր սանուն



անմշակ մտայր մէջ սերմանուած ըլլալով, ա-  
պարդ-իւն ըլլայ . այլ կուղէ իբրև հանճարեղ  
երկրագործի մը պէս արօրագրեալ արդաւանդ-  
երկրի վրայ ցանուի, որով միոյն փոխարէն ե-  
րեսուն, վաթսուն, հարիւր առնէ : Առ որ փա-  
փաքելով, մնամ ծառայ սիրելի Ազգիս ,

Ֆ. ՄԿՐՏԻՉ ԱՌՄՈՆԵԱՆ





ԱՆՇԻՈՒ

ԳԱՏՈՂՈՒԹԵԱՆ



ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ

Ի ԿԵԻՌ ԱՆՍԻԱԼ ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱԵԽԱՐՀԻ



ՅԱՐՄԱՐԵԱԼ Ի ՆՈՅՆԱԿԱՆ ԻՄԱՅՈՒԱԾՈՅ

Ի ԴԻՐՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՅԱԿԱՆԱՅ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՅԻՋԻԳԱՅԷ

1832 ԹՈՒԻՆ Ի Կ՝ՊՈԼԻՍ

“Եթէ ոք գնայ ՚ի տունըեան ոչ  
գայթազղի, զի զլոյս աշխարհիս այ-  
սորիկ տեսանէ” :

Յովհ. ԺԱ. 9



## Ա. Զ. Գ

Տեսութիւնն աչաց տկարանայ տեսանել ինչ յանդիտութեան գաղտնիան, որք թէ ծածկեալք ի մթավայրս իցեն. և ոչ ի յայտնութիւն երեւման նոցա հնարք ինչ իցէ երբէք նոցուն աներկեւան տեսութեան, եթէ ոչ փայլեսցի անդ նըշոյլ ճրագի, և կամ ճաճանչ արեւագունդ շառաւիղաց:

Սոյնպէս և որ ի շփոթ բանն են տարակոյս իմացուածոց ոչ քան զկշռադատ ուղղութիւն մտաւոր քննութեան առաւել ոք կարացցէ յայտնել զնոյնարան ճշմարտութիւնն անկասկած:

Եւ ոչ այլ ոք ի թուոյ իմաստասիրական մատենից կարգի երբէք ընդ այս պաշտօն ուղղադատ, հարթ և հաւասար ի բաց մերժել զտարակոյս իմացուածս կասկածելի մթութեանց, քան զպանծալին ի գիտութեանց Տրամարանութիւնն կանոնազարդ. որ նա ինքն զարդարուն պաճուճէ զմիտս ի փորձ հաւաստի ընդ լեորախորհուրդ իւրականն նախաստեղծ ճանաչման հողւոյն յուղղութիւնն իսկական:

Չափ անդէն առնու ի կշիռ ուղղութեան զաղդարարս բնասոս պատգամաց աղղեցութեանց զգայարանաց ի սկզբնաշաւիղ դիւտս ստուգութեան մտախոհ անսխալ ճանաչման:

Անդ ըստ իւրում բնիկ իւրասովոր արարչագիծ նախականն ի սկզբանէ օրինօքն՝ զննէ քըն-

նէ զապացոյցս իսկութեան զստուգութենէ երկ-  
բայելի շիտթ խնդրոց :

Չի որք ի մռայլ նսեմութեան իցեն յայլազրոյց  
և օտարաբան յանյարիր խօսս աւակական ի դեզը-  
կական խորհուրդ այլաբուն շաղիաղվանաց խու-  
ժանին , որք երազեն ի ցնորս , քան որ իրք  
յինքեանս յայանի ցուցանիցեն զիսկութիւնն նոյ-  
նակերպ :

Անդ հիմնական գրութեամբ իւրով հաստատէ  
զստուգութիւն խնդրոց իսկական ճշմարտու-  
թեամբ նոյուն :

Անդ և իմացմունք մտաց հիմնական ուղղու-  
թեամբ հաւատարազոյզ չափին յանսխալ կշիռ  
իսկութեան իրաց ընդ բանն հանճարարուեալ  
իմաստութեան :

Սա է հռչակեալ գիտութիւնն այն տրամաբա-  
նական , որ կանոնաւոր օրինօք զհնարս հանճա-  
րէ ուղիղ դատաստանաց յանսխալ վճիռ զստու-  
գութենէ ամենայնի :

Այլ զգովեստիցն նորա պաճուճանք՝ ոչինչ  
ազգեն ի ներբողս դրուատել զայն ի ցուցումն  
հիասքանչ զարգացման այլոց :

Քանզի ամենեցուն միաք ի գլուխս են , գիւ-  
րաւ և ամենեքեան գյարգ ազնուութեան պատ-  
ւոյ նորա ճանաչեն քաջապէս , թէ զինչ բերկ-  
րութիւն սրտի յանչափն քան ըստ գիւտ ճո-  
խութեան գանձուն զգայցէ յապացոյց յայանու-  
թեան իրացն . մինչ գազարեացին կարծիք ի  
տարակոյս երկրայութեան . որով միւրք գերա-

զանցին քան զամենեւին ճշմարտութեան ճանաչմամբն . քան որ զօրութիւնք ի նմին անձին իցեն յորպիսութիւն բազմագործ :

Սովաւ միայն և մարդիկ փայլին իմաստութեամբ որոշեալ ի բիրտ ռամկութենէ , և գեղարուեստ հանճարով մտաց ազնուանան ի խորհուրդս : Ապա ոչ մնան մեղ խօսիլ աստէն , թէ զինչ կշիռ ուղղութեան զուգակից իցէ նմին համեմատ ի նոյնական չափ հաւասար ճանաչման ընդ խորհուրդ քննութեան յայտնութեան իրաց յիսկութիւնն նոցա :

Քանզի ամենեքին դիւրագոյն են ի յարաշարժ գործողութենէ մտաւոր խորհրդոյն , որք ընդ քողով անգիտութեան ծածկեալ ի զգայարանաց յայտնին ի մտաց , իբրեւ հետեւակ անծանօթի ի նոցուն ծանուցեալ նախընթացի :

Ապա աստէն սկիզբն առցուք խօսիլ միայն զսկզբնաչաւիղս յայտարար կանոնաց նորա , որք յաւէտ նպաստեն ի մուտ անդր կանոնական օրինաց նորա :

Եւ այս իբր դիւրապատրաստ հմտութիւն ինչ նախընթաց ի հետաչաւիղ լիասահման օրինաբութեան այլոց տրամաբան մատենից ի պէտս նորալարժ դպրոցականաց Ազգիս <sup>(1)</sup> :

Որոյ եմ միշտ փափաքող երջանկութեան ,

Ն. Ե. ՊՊՂՈՍ ՅԻԶԻԿԱՅ

(1) Սոյն «Ազգը» իւր բնագրով տպել տուի նոյնութեամբ ի ծանօթութիւն ընթերցողաց , բայց միւսմեջք աշխարհաբառի վերածուած են :

---

“Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն  
քո առատ է, ամենայն մարմինդ լու-  
սաւոր եղիցի: Ապա թէ ակն քո չար  
է, ամենայն մարմինդ խաւարին ե-  
ղիցի”:

Մատթ. 9. 22:

---



ՆԱԽ ԱՐԱՐԱԾՈՅ ՎՐԱՅ ԽԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՄԸ

Ի տիեզերս էակաց տեսակը երկուք են, երեւելի, Աներեւոյթ :

Եւ զասոնք ծանօթանալու համար՝ երկու տեսակ գիտութիւնք սահմանուեր են, Հաւատք ու Իմաստութիւն, որ է փիլիսոփայութիւն :

Երբոր աներեւութից վրայ կը խօսուի, կըսուի Հաւատք, իսկ երբոր երեւելեաց վրայօք կը խօսուի, կըսուի փիլիսոփայութիւն :

Այս երկուքն ալ գիտութեան միջնորդներ ունին :

Փիլիսոփայութեան գիտութեան միջնորդը՝ զգայութիւններն են, իսկ Հաւատոյ գիտութեան միջնորդն ալ Աւետարանն է :

Հաւատք Աւետարանէն դուրս չկրնար անցնիլ. ասպա աներեւութից ճշգրութիւնը աւետարանով կը ճանչցուի :

Այսպէս և երեւելեաց ճշգրութիւնն ալ՝ փիլիսոփայութեամբ զգայարանօք կը ճանչցուի :

Ուստի փիլիսոփայութեան Աւետարանը զգայարանքն են, սոյնպէս և Հաւատոյ զգայարանքն ալ Աւետարանն է :

Երբոր ասոնք իրենց գիտութեան միջնորդին նոյնական սահմանէն դուրս որ ելնեն, այսինքն, փիլիսոփայութիւնը զգայութեանէն, և Հաւատքը Աւետարանէն, ռամկական մտքով խաբուած մտ-

լորեալ կը համարին , և այնուհետև՝ իրարու մէջ  
կսկսի անխմաստ ու աննշան անակնկալ վէճեր  
յուզուիլ :

### ԳԼՈՒԽ Բ.

Երեւելիները երկուք են, մին նիւթական , ու  
միւսը աննիւթական :

Երեւելեաց մէկ մասը երկկնքն են , որոնք աս-  
տեղք կըսուին :

Ասոնք ալ երկու կարգ են , հաստատուն և  
շարժական :

Հաստատուն աստղերը՝ որոնք փոքր ճաճանչ-  
ներով կը շողշողան համաստեղութիւնք կըսուին :

Իսկ շարժականներն՝ որոնք մոլորակ կըսուին ,  
երկնից համաստեղութիւններուն նման ճաճանչ-  
ներով չեն շողշողար , այլ արեւուն բոլորաթիւքը  
միշտ շրջան կառնուն , որոնց բոլորական շրջա-  
գծին մէջ ատեղը արեւը կը բաղմի :

Ահա այս է ասոնց իրարմէ ունեցած տարբե-  
րութիւնը :

Երկրի վրայ եղած նիւթականներն ալ երկու  
կարգ կը բաժնուին . մին ի կարգի տարերաց ,  
իսկ միւսն ի կարգի գոյացութեանց :

Գոյացութեանց յատկութիւնը կը պարտաւորի  
սերմնական բեղմնաւորութեամբ անձիլ , և ձե-  
ւերով սահմանաւորեալ չափով ըլլալ , և ամեն  
տեղ չը գտնուիլ , բայց միայն ի սահմանաւոր  
տեղի , և նորանոր ծննդեամբ անձիլ , և եղծ-

մամբ ոչնչանալ, և ժամանակի ներքև ըլլալով,  
յարաչարժութեամբ ծնանիլ և ապականիլ: Իսկ  
տարերաց յատկութիւնը ասոր հակառակն է:

Ա. Ամեն տեղ դանուիլ:

Բ. Սերմնական բեղմնաւորութեամբ չաճիլ:

Գ. Չեւերով սահմանաւորեալ շախիւղ չըլլալ:

Դ. Յատկացեալ տեղ չունենալ:

Ե. Ապա համատարած ամեն գոյացութեանց  
մէջ ըլլալ:

Գարձեալ այլ յատկութիւն տարերաց:

Ա. Նախ իր մէջն ըլլալ:

Բ. Նոյնութեամբ ուրիշներուն մէջն ալ:

Գ. Յարաչարժ շարժման մէջ զինքն չծնանել:

Դ. Եւ ոչ զինքն ապականել:

Ե. Ուրիշները ծնանել ու ապականել:

Զ. Նախաչարժ ի յաւիտենից ստեղծման հա-  
մեմատ՝ անժամանակ անայլայլ իր մէջն ըլլալ:

### ԳԼՈՒԽ Գ.

Գոյացութեանց տեսակը երեք է. Հանգայլին,  
Տնկական, Զգայական:

Ասոնք հինգ կերպ անուններով կորոշուին:

Ա. Էակ, Բ. Նխթ, Գ. Իր, Դ. Մարմին, Ե.  
Գոյացութիւն:

Ա. Էակ կըսուի անիկայ, որ եթէ ճշմարիտ  
ըլլայ, էակին հակադրութիւնը ոչինչ է:

Բ. Նխթ կըսուի անիկայ, որ եթէ տեղ բըռ-  
նէ, ուրիշը անկից վանելով:

Գ. Իր կըսուի անիկայ , որ ծանրութեան թանձրութեամբը շոշափուի :

Գ. Մարմին կըսուի անիկայ , որ սահմանաւոր չափով ըլլայ , խորունկութեամբ , լայնութեամբ , երկայնութեամբ , երեւելի արարածոց տեսակով , ու զանազան կերպարանաց ձեւերով :

Ե. Գոյացութիւն կըսուի անիկայ , որ սերմնական բեղմնաւորութեամբ պղտիկէն մեծ կըլլայ , ու շատնալով կաւելնայ , տարերաց բազազրական մասնիկներով աւելցած , իրարու հետ հաղորդութեամբ խմորուելով :

Տարերաց <sup>(1)</sup> տեսակները չորս հատ են . Հող , Զուր , Օդ , Հուր : Որոնք երեք կերպ անուններով մեղի կը ճանչցուին . Էակ , Նիւթ , Իր , ասոնցմէ գոյացութեան ու մարմնոց խմացուածը ամեն կերպով հեռի է :

Ըստ որում անոնց մէջ սահմանաւոր ձեւ մը չկայ , իրական չափով բոլորի մէջ , երկայնութեան , լայնութեան , խորութեան , ոչ ալ իր բոլորին մէջ չափով տարածեալ մասեր . ուր ա-

---

(1) Ֆիզիզային հոս մինակ չորս տարերաց անունները տալուն մի նայիր . ուրիշ տեղ Եւրոպացոց գտած եօթանասուն եւ երկու տարերաց վրայօք ալ պիտի խօսի երկարօրէն . զանոնք ալ ժամանակին պիտի հրատարակեմ : Բայց Ֆիզիզայն զանոնք ջրեր է , սոյն չորս տարերաց ունեցած տարբեր յատկութիւնները , նոցա յատկութեանց հետ բազդատմամբ . որոնք բնաւ տարերաց յատկութիւնը չունին . ինչպէս եւ այս համաօտիս մէջն ալ յայտնի կերեւան . համբերէ որ դուն ալ համոզուիս :



նոնց մէջ բոլորին ու մասերուն անունները զանազան են , ինչպէս մարդու ծառայելն . բայց նոյն անունով բոլորն ալ մասեր կըլլան , ինչպէս Ովկիանու ջուրը , ու անձրեւաց կաթիլը :

Բայց գոյացութիւնը ու մարմինը բազմանուն են , զորօրինակ ծառը՝ իր բոլորին կը նայի , տերեւն ալ բոլորին մասերուն :

Տարերաց զօրութիւնը այս է , չորութիւն , ջերմութիւն , խոնաւութիւն , ցրտութիւն :

### ԳԼՈՒԽ Գ.

Իսկ աննիւթական երեւելիքը՝ իրաց կեղծ տեսիլքներն են , ասոնք էակի քով ոչինչ են , և ոչինչին վրայօք խնաստութեան մէջ բնապատում չըլլար . այսինքն ջրոյ մէջ մարդու կերպարանքը ու հայրի մէջ նկարուած կերեւայ : Որովհետեւ ամեն ճշմարիտ ծանօթութիւնները նիւթական էից երեւութեն կըլլան :

### ԳԼՈՒԽ Ե.

Բայց աներեւոյթ նիւթականներն ասոնք են . զորօրինակ Աստուած , Հրեշտակ , Հոգի , Գիւլ :

Ասոնք մեր դժայտարանքներով իրական ճշդութիւն չունին , միայն ասանց ստուգութիւնը բընազանցապէս բանիւ խորհրդոյ մտաց՝ մեզի կը յայտնուին , և ի վարդապետութենէն հաստոյ :

ԳԼՈՒԽ Զ.

Երեւելի էակներէն ոմանք երկինքն են , ուրոնց վրայօք աստղաբաշխը կը ճառէ :

Ոմանք երկրի վրայ են , որոնց վրայօք հանդարանը կը ճառէ :

Կենդանեաց վրայօք՝ կենդանաբանը :

Տնկոց վրայօք՝ անկաբանը :

Տարերաց վրայօք՝ բնագէտը :

Տարերաց մէջ մարմնոց լուծութեան վրայօք՝ տարրալոյծը :

Հիւանդութեանց վրայօք՝ բժշկականութիւնը :

Չափելի տարածութեան վրայօք՝ երկրաչափութիւնը և այլն :

Ասոնց ամենուն ալ իրենց ծանօթութեանց ճշդութիւնը իմացուածներովը մէկտեղ զգայութենէն մտքին մէջ կանցնին :

Բայց երբեմն զգայութիւնները անյարմար միջոցներու յարակցութենէն խաբուելով , ճշդեանոնց վրայ վերահասու չեն կրնար ըլլալ , իբր թէ անոնք ալ ըստ ինքեան իրեր ըլլան . ապա միջնորդական անյարմար միջոցներուն ցրցուցածին պէս , զորոնք որ զգայարանքներով կզգան , անոնց իսկական երեւոյթները նմանօրինակ կը ցուցուին , երբեմն շիտակ և երբեմն սխալ : Այսինքն , աչաց զգայութիւնը երկնից երեսը իսկական լուսինն ինչպէս կզգայ նէ , նոյնպէս ալ անոր սլատիները ջրոյ մէջ : Կամ՝ նաւը հեռուէն

փոքրիկ գնտակի մը պէս, և կամ արեգակը մար-  
դու թաթիկին նման, կամ արեգակին ու լուս-  
նին միեւնոյն շաւղին մէջ միօրինակ ընթանալը  
կղզայ :

Սակայն շատ անգամ զգայարանքները իրաց  
խակութիւնը սխալ իմանալովը՝ միտքը կը շլայը-  
նեն. թող գիպուածական սլատահարները՝ ու-  
րոնք գիպուածով մը զուգընթացու թեամբ ոմանց  
իրաց ետեւէն կուգան, որմէ զգայարանքները  
կը խաբուին. իբր թէ սլատահարները այն դէպ-  
քէն յառաջ կը գան : Զորօրինակ, գիսաւորները  
երեւնալէն ետեւ՝ սովը, մահը ու սլատերազմը  
կը պատահին : Զգայութիւնները այն սլատա-  
հարներէն սխալելով միտքը կը խաբեն ցնորա-  
կան կարծիքով, թէ անոնք գիսաւորներէն յա-  
ռաջ կուգան : Թէ և ասի ալ ճշմարիտ ըլլայ,  
պէտք է երկրայութեան կարգը գրել, ինչու որ  
անոնց մէջ հզօր ապացոյց մը չկայ, որ թէու-  
թեան առիթ տայ, անոնց ճշմարիտ իմացուած-  
ները յայտնի ստուգելու համար. և թէ անոնց  
թէութեանը մէջ ի՞նչ առիթներ կան որ այնպի-  
սի դէպքեր կը ցուցնեն, մինչեւ որ միտքը ին-  
քիրմէն պարզապէս յարմար ընտրութեամբը  
սլատառաց թէութեան շարժառիթը չիմանայ,  
թէ անոնք երկրի վրայ այնպէս անցքեր կը  
ցուցնեն :

Ապա ասի անոնց վրայ մինակ լոկ խօսք մ'է :

Ուստի իրաց ճշգրութիւնը իմանալու համար  
իմաստունները դարուց ի դարս փորձելով, կա-

նոնական օրէնք հաստատեցին . որպէս թէ իրերը մտաց շխտակ կշռող կշիռքի մէջ ըլլան , զի մինակ զգայարանաց ազդարարութեանը ապաւինիլ չըլլար , որոնց սխալմունքը շատ են . ուրեմն պէտք է այն կանոններուն վրայ հաստատեն , որով պարզ քննութեամբ մը իրերը յայտնուին . ահա այս է այն կանոնական օրէնքն , որ կը կոչուի Տրամաբանութիւն . զանի փորձ առնելով , միաքը իրերը քննելու ատեն անոնց ճշմարտութիւնը գիտնալու համար պիտի դիտէ թէ համեմատութեան կշիռքին մէջ ի՞նչպէս անսխալ կրնայ ըլլալ . որով իրաց խակութիւնը սրոշելու համար , զգայարանաց վրիպակները ընտրելու կը զօրանայ միաքը : Զորօրինակ .

Գաւաղան մի ջրին մէջ մկուած , մէջքէն կտրուած կզգայ զգայարանքները , նոյնպէս և նաւալարները լեռները արտաքին անցնիլը կըզգան , մինչ իրենք ծովուն յորձանուտն են :

Մհա արդասիք արամաբանական գիտութեան , որ զգայութեան ազդարարութիւնները լաւ կը քննէ մտաց անսխալ կշիռքովը իրաց ճշմարտութիւնը գիտնալու համար :

Ասոր համար Տրամաբանութիւնը շխտակ կը սահմանուի :

Տրամաբանութիւնը գիտութիւն մի է , որ իրաց ճշդութեանը համեմատ միաքը կուզէ , ճշմարտութիւնը ճանչնալու համար :



ԳԼՈՒԽ Է.

ԷԱԿԱՅ ՊԱՐԶՈՒԹԵԱՆ ՆԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Պարզը առանց մասանց կըլլայ, իսկ բաղադրեալը մասամբ ք :

Պարզութեան յատկութիւնը նոյնութիւնն է, և նոյնութեամբ իր մէջ անեղծ մի է. վասն որոյ ըստ ինքեան յաւիտենական է, և անեղծութեամբ ամբողջօրս, և շատութեամբ զանազանուած չէ ք Սրովհետեւ պարզին նոյնութեանը՝ զանազանութիւնը հակառակ է. ատոր համար՝ և միութեան պարզին նոյնութեանը՝ հակառակ է շատ բան ըլլալը. որ նոյն է, ինչ որ է, և շատն ալ մէկմէկէ զանազանութեամբ կըլլայ ք :

Բայց տիեզերական բաղմութեան մէջ, որոնք որ էապէս են, զանոնք միտքը ճանչնալ կուզէ. որոնց մէջէն մինակ Աստուածը պարզ էակ կը գտնէ, որովհետեւ անոր մէջ իրեն էութիւնը կեցնող բաղադրութիւն մը չը կայ, որոնցմով Աստուած ըլլար ք Եւ Աստուծոյ միութեան յայտարարը պարզութիւնն է, որով երբէք իրեն հաւասար չունի. թէ որ բաղադրեալ ըլլար, հոն իրարու հետ մասանց համեմատութեամբը, մէկը շատ, ու մէկը քիչ, մէկը հաւասար, ու մէկը անհաւասար թիւերը կը շատնար, ուստի շատերու մէջ, ոչ ալ շատերէն յառաջ շատէն դուրս միութեամբ է, սյլ բաղմութիւնը անկից,

ու անով է : Աստուծոյ միութեանը յայտարար յատուկ նշանը միակ անօր պարզութիւնն է . որով նոյնական միութեանը համար ինք իր մէջ անեղծ է , յաւիտենական և անփոփոխ ըստ ինքեան . վասն որոյ անհուն է , որուն անսահման ու անեզր հունաւորիչ կամ վերջաւորիչ մը չկայ նորա աննմանութեամբ էութեանը . որով ամեն բանը իր մէջ կը վակէ , ամենուն անսահման տեղի ըլլալովը . ու ինք անվայրափակ տեղ մը , ինք մինակ իր մէջ . վասն որոյ անարար , անեղ , անակիղքն ու անվախճան , էութիւն անհուն և յաւիտենական . որ ինք արարածոյ յաւիտենականութենէն ու ամենուն վախճանէն վերջն ալ , ինք նոյնութեամբ նոյնն է : Թէ որ անօր էութիւնը բազադրեալ ըլլար , շատ կըլլար , ու շատերու մէջ աստիճանաց զանազանութիւնն՝ երբէք անհուն ու յաւիտենական չըլլար . որովհետեւ ասոնք պարզութեան ու միութեան յաւիտենական նշաններն են :

### ԳԼՈՒԽ Ը .

#### ՅԱՂԱԳՍ ՀՐԵՇՏԱԿԱՅ ԵՒ ՀՈԳԻՈՑ

Հրեշտակները ու մարդկան Հողինները , նաեւ դիւաց ալ , որոնք իմանալի էակներ են , աննիւթ , սաստիկ նուրբ , աներեւոյթ , մարմնոց թափանցող , թեթեւ տեղական շարժուն , իտհուն , անձը ու ուրիշները իմացող , և բազադրեալ են :

Որովհետեւ շատ են , ու իրարմէ զանազան ,  
և աստիճանաւոր , որը քիչ ու սրը շատ , պաշ-  
տամանց զօրութեան ու էական հանդամանաց  
համեմատ :

Սակայն ասոնց տեսակաւորեալ մասանց բա-  
ղադրութեանը վրայօք , մեր մէջ ճիշդ ապա-  
ցուցանելու համար յայտնի ու զգալի իրական  
ծանօթութիւն մը չկայ . միայն թէ բնազանցա-  
կան ստուգութեամբ՝ մտաց խորհրդոյ բանիւ-  
մեղի յայտնի կըլլան թէ ասոնք բաղադրեալ ըլ-  
լան . որովհետեւ շատ են , և իրենց մէջ բոլոր  
մի են , սահմանաւորեալ զանազան թիւերով .  
որոնց մէկը միւսը չէ . ուրեմն ասոնց մէջ պար-  
զութեան միութիւնը չկայ , որ աննման մասե-  
րով իրարմէ կը զանազանին , և հազօրդական  
մասերով ալ , հրեշտակի անունով կը հաւասա-  
րին :

Ասոր այսպէս ըլլալը Աւետարանական առակն  
ալ կը ցուցնէ . տասնին ալ կուսական անուն  
կուտայ . որ է անոնց հասարակ մասը , և տաս-  
նին զանազանութիւն կուտայ , իբր թէ տարբե-  
րիչ ու զանազանիչ հասարակ մասին . ոյսինքն ,  
կուսութեան հաւասար ու հասարակ մասին վը-  
րայ « իմաստուն ու յիմար » բառերը եւեկցնելով :  
Թէ որ անոնց մէջ Հոգւոյն պարզութիւնը մի  
և նոյն ըլլար , տասները երկու անգամ հինգ  
թիւերը իրարմէ ի՛նչով պիտի զանազանէին :

Ասոր նման և Հաւատքն ալ մեղի կը ցուցնէ  
փորձով Հրեշտակաց ու դիւաց վրայ : Որովհե-

տեւ դեւերը նախ Հրեշտակներն էին , ու անոնց հաւասար . բայց դեւերը եղծան ու ապականեցան , որով իրենց էութեան մէջէն մաս մը կորսընցուցին . ասով ըստ բոլորին շեղծան ոչ ալ կորսուեցան ըստ բովանդակ էութեան . թէ որ կորսնցնէին , կունայնանային ու ոչինչ կըլլային : Ապա ուրեմն էութեան մէկ մասը եղծին ու կորսընցուցին : Զի եթէ անոնց էութիւնը պարզ ըլլար , ու մասերով բաղադրուած չըլլար , ապաքէն հոն եղծման ատեն նոյնական ու պարզական ըլլնութեան եղծումն կըլլար . որով բոլորովին էութիւննին ոչնչութեան մէջ կը կորսուէր , չէ թէ էութեան մէկ մասը պահելով , իրենց ազաւաղ էութեան որպիսութեան մասը չէին կորսնցնէր :

Ասիկայ օրինակով աւելի լաւ կը հասկցուի :

Որովհետեւ օրը ժամերէն ու լուսէն կը բաղկանայ . Տիւր այս երկուքն ալ ունի , ժամն ու լոյսը . բայց նոյն ժամն է գիշերուան ու ատենջեան . գիշերը մինակ ժամը ունի , ատենց լոյսը ունենալու : Թէ որ օրը պարզական բան մը ըլլար , անհնար էր գիշերուան ու ցորեկուան մէջ օրուան զանազանութիւն գնելը . և եթէ պարզ ըլլար , նոյն կըլլար գիշերուան ու ցորեկուան քսանը չորս ժամուն մէջ :

Այսպէս օրը բաղադրուած է ժամերէն ու լուսէն , ցորեկուան ու գիշերուան երկու տեսակ մասերով :

Տիւր երկուքն ալ պահած է , և գիշերը մէկը պահած ու միւսը կորսնցուցած : Այսպէս հաս-



կըցիր Հրեշտակոց և գլուաց զոյութեանց բազմազարութեանը վրայօք . այսինքն անոնց խմանալի էութեանը ու խմանալի մասանց զոյութեան վրայ :

Եւ անոնց խմանալի աննխթական զոյութեան համեմատ իրարմէ տարբեր ու զանազան յատուկ մասեր ունին . որը հասարակ կըսուի , Հրեշտակ անուամբ . որը անոնց խմանալի գոյութեան էութեանը հաւասար ըլլալը կիմացնէ , և որն ալ յատուկ . որով իրարու հետ առանձնական նոյնութեամբը աննման ըլլալը ցոյց կըտայ : Ասով կիմանանք թէ անոնց բազմութեան տեսակաց կարգին մէջ՝ մէկը միւսը չէ : Զորօրինակ , Սերովբէն ուրիշ մէկն է , Քերովբէն ալ ուրիշ մէկը . իրարմէ զանազան ու իրարու հաւասար : Արդ՝ կարելի չէր անոնք պարզութեան նոյնութեամբը հաւասար ու զանազան ըլլային : Այգա ուրեմն քանի որ անոնք հաւասար որպիսութեամբ հաւասար են իրարու , և աննմանութեամբ իրարմէ զանազան են նէ , իրարմէ տարբեր կըլլան : Ուստի յատկացեալ զանազան մասամբ շատ կան , և իրարու աննման , թէ որ պարզութիւնը խոհուն էակ ըլլար . բայց խոհուն էակէն պարզութիւն չհետեւիր , այլ միայն խմացող : Նոյնպէս թէ որ Տարբերն ալ ստոր ըլլային , խոհուն էակ կըլլային , անոնց պարզ ու խոհուն էակին նման :

ԳԼՈՒԽ Թ.

ՄԱՐՄՆԱԿԱՆԱՅ ՎՐԱՅ

Մարմնականք՝ որոնք շատ են և իրարմէ տարբեր , բոլորն ալ բազադրեալ են :

Արարածական էակները՝ պարզական բնութիւն չունին , բայ ի միոյն Աստուծոյ , և զանազան մասերով իրենց մէջ՝ իրարմէ տարբեր բոլոր մի են ամենքն ալ . որոնցմով արարածոց բազմութեան թուով շատ են , մէկը միւսը չէ , անոնց էութեան զանազան մասանց յուեշնալովը , նոցա հասարակ էութիւնը ձեւաւորողի ու կերպաւորողի պէս :

Որովհետև ասոնք ամենն ալ մասերէն կը բազկանան . զորօրինակ , Մարդ՝ Հոգիէ ու Մարմինէ . Մարմինն ալ՝ որ բոլոր մ'է , մասունքներէ կը բազկանայ :

Այսպէս Հոգին ալ՝ որ բոլոր մի է , մասերէն կը բազկանայ , աննման մասերէն բազկանալով = Հոգւոց բազմութիւնը ինքնակաց են , և իրարու անհազորդ . երբոր ասոնք մարմինէն մեկնին , ըստ ինքեան զատաբար կը կենան :

Բայց մարմնոյ մասերը՝ որոնք երբոր քակտին , ըստ ինքեան զատաբար առանձին թուով մարմին եղածին պէս չեն մնար , այլ իրարու հետ խառնըւելով հաւասար գոյութեան հետ կը հաւասարին , զատական միութեան թիւը կորսնցնելով :

Այսպէս թէ որ Հոգին ըստ ինքեան բոլոր մը չըլլար, իրեն բաղադրեալ զատական մասերուն մէջ, հաղորդական և պարզական նոյնութեամբը հասարակ գոյութեան հետ կը հաւասարէր, իրեն միութեան զատական թիւը կորսնցնելով:

### ԳԼՈՒԽ Ժ.

#### ՀՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

Հոգին և կամ Մարմին՝ որոնք որ ճշմարիտ է՝ ակներ են, իրարմէ տարբեր յատկութիւններ ունին:

Մարմնոյ յատկութիւնը տեղ մը գրաւել է, ուսկից ուրիշը վանելով. և ասի անոր նիւթեղէն հանգամանք ունենալուն յատկութիւնն է:

Ըստ որում մարմին՝ որ կըլլայ սահմանաւոր չափով՝ շոշափելի տարածութեան մէջ, խորունկութեամբ, երկայնութեամբ, լայնութեամբ:

Իսկ Հոգւոյն յատկութիւնը՝ որ առանց տեղակալութեան մարմնոյ մէջ կը թափանցի, զատական մասերովը իրարու անթափանց է:

Ուստի Մարմինը նիւթական գոյութիւն կըսուի, որ սահմանաւոր տեղ մը կը տեղակալէ. անոր անհնար է առանց յաւելման բան մը տեղէ մը վանելու, և կամ տեղէ տեղ շարժելով մը:

Իսկ Հոգին՝ որ աննիւթական գոյութիւն կըսուի, առանց տեղակալութեան ի մարմին կը թափանցի, զոր իւր տեղը պահելով:

Եւ ասի երկուք է , զգալի , իմանալի , որանք  
առանց տեղակալութեան կը թափանցին :

Իմանալին՝ Հոգի կըսուի : Զգալին՝ Հոգի չըս-  
ւիր . զորօրինակ , արեւուն ճաճանչը ջրոյ մէջ :  
Ուստի աննիւթական իմանալի գոյութիւնը Հո-  
գի կըսուի , և էակ խոհուն :

Իսկ մարմինը զգալի նիւթական գոյութիւն ,  
և էակ անխորհուրդ կըսուի :

### ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀՈԳԻՈՅՆ ԳՈՅՈՒԹԵՆՔ ՈՒ ԱՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆԱՑ  
ՇԱՐԺՄԱՆ ՎՐԱՅ.

Հոգին է աննիւթական իմանալի գոյութիւն ,  
և իր մէջ խոհուն էակի նման իմացական է , որ  
կը շարժի ինքնիրեն իւր էութեան իմացական  
շարժմամբը իր կենացը սէս :

Հոգւոյն շարժումը՝ խորհրդոյ իմացմունքներն  
են . խորհրդոյ իմացմունքներն ալ՝ շարժման  
մէջ Հոգւոյն կեանքն են :

Սակայն Հոգւոյն շարժումը ուրիշ բան չէ ,  
բայց եթէ իրմէն , որ ինքն է , իրեն է , իրմով  
է , իր մէջ է , ինչպէս ջերմութիւն ի հուր :

Որ երեք տեսակ կը շարժի , չեղոքապէս , կը-  
բաւորականապէս , ներգործականապէս : Բայց  
Հոգւոյն կենդանական շարժումը՝ ինքիրմէն՝ իր-  
բեւ ինք իր մէջ , զօրութիւն Հոգւոյն կըսուի :

Երբոր Հոգին զգայարանաց ազդարարութե-



նէն կրաւորականապէս որ շարժի, զգացումն  
Հոգւոյն կըսուի :

Եւ երբ Հոգին ներդորձականի պէս որ շար-  
ժի՝ խորհրդով իրեն զգայարանաց զգացմունք-  
ները իմանալու համար, միտք ըլեզին մէջ օ-  
թեւանած կըսուի :

Բայց երբ յօժարութեան դէպի սիրտ որ  
շարժի, կամք կըսուի. այսինքն հրոյ զօրութիւ-  
նը՝ ինքնիրեն իր մէջ եղածին պէս՝ շեղութեան  
շարժում կըսուի. և երբ կը շարժի հովին վշե-  
լէն իր բոցովը բարբոքելով, կրաւորական շար-  
ժում կըսուի :

Եւ երբ կապարը հալեցնէ, և կամ ջուրը ե-  
ռացնէ, ներդորձական շարժում կըսուի :

Այսպէս Հոգին ալ երեք կերպ դորձողութեան  
համեմատ իր մէջ իր շարժումը ունի :

### ԳԼՈՒԽ ԺԲ.

#### ՀՈԳԻՈՅՆ ԶԳԱՑՄԱՆԸ ՎՐԱՅ

Զգացումը՝ Հոգւոյն իմացումն է իր մէջ, որով  
Հոգին կիմանայ էլոյ որպիսութիւնը, իր զգա-  
յարանաց ազգարարութենէն դուրս. և զգաց-  
մամբ զգայարանացն ալ, ինչ իր՝ որ աշխարհի  
մէջ կան :

Բայց զգայարանաց ազգարարութիւնը՝ սրտա-  
քին իրաց շարժումն է, թէ այն իր ըլլայ և թէ ի-  
րին որպիսութիւնը, և թէ որպիսութեան դորձը :  
Եւ թէպէտ Հոգւոյն այս իմանալը իր զգաց-

մամբը թէ իրաց՝ թէ որպիսութեան՝ և թէ գործոց վրայօք Հոգւոյն մէջ սկիզբէն ի վեր չկայ, այլ ի զգայարանաց անտի է, որոնք իբր թէ զանոնք ցուցնելու յայտարարներն են. թէ անոնք ի՛նչ ըրեր են, ի՛նչ որպիսութիւններ ունին, և թէ ի՛նչ գործողութիւններ կը կատարեն :

Բայց իմացուածոց յարմարութեանը ու անյարմարութեանը ծանօթանալու ընտրութիւնը, սկիզբէն ի վեր իբ մէջն է. իբ էութեան արարչագիծ նախագործ ատենէն ի վեր :

Որովհետեւ ամեն իմացմունք՝ որոնք որ մտքի մէջ են հոն մինակ զգայարանքներէն կը ժողւին, որուն անհնարին է առանց զգայարանաց բան մը իմանալ. զորօրինակ՝ Արեգակը, Լուսինը, Աստղերը, Լեռները, Մառերը, Խաչինքը, Հողը, Զուրը, Օդը, Գետը, Մովը, Անձրեւը և այլն :

Բայց կան այնպիսի իմացմունք, որոնք իբրուն յարմարութենէն կամ անյարմարութենէն՝ մտաց զգացմունքներուն մէջ առանց զգայարանաց՝ Հոգին ներքին զգացմամբ կիմանայ : Զորօրինակ, ծովուն յատակը ցամաք երկիր ըլլալը, և երկրին բոլորակութիւնը, և անոր օրական շարժումը, և երկիրն օդոյն պարապութեան մէջ անհաստատ ըլլալը, և արեգական գիշեր ատեն երկրի ներքեւ ըլլալը, երկրին տակը հոն ցորեկ ըլլալը, որ հիմայ արեւելքէն կը ծագի, այն որ երեկոյին արեւմուտքի կողմէն երկրիս ներքեւը մտաւ :

Թէպէտև Հոգին զգայարանքներէն կը ծանօթանայ թէ եղեգը ջրին երեսը կը մնայ, բայց եղեգին ջրին տակ չտուղելուն պատճառաց ընտրութիւնը՝ սկիզբէն ի վեր ինքնիրեն ունի, թէ եղեգին մէջի օդալից պարապութիւնը, ջրին երեսը մնալուն պատճառ է, և այսպէս կը վըճուէ առանց զգայարանաց զգացման, որ եթէ երկաթեայ սափոր ալ ըլլայ, մէջը օդալից պարապութեամբ, այն ալ ջրին մէջ չընկղմիր, ջրին մէջ չընկղմած երկաթեայ սափոր մ'ալ չըլլայ. թէ և տեսած ալ ըլլայ զգայարանքով ջրին մէջ երկաթը ընկղմած:

Նաև ընդհակառակն իրաց անպատշաճութեանէն զգայարանաց զգացումէն աւելի դատաստան ալ կընէ. այսինքն, երբ լուսինը ջրին մէջ տեսնէ, անոր հետ մէկտեղ զինքն ալ ջրհորը, ճշգիւ կը դիտնայ թէ անոնք իրաց պատկերներն են, և չէ թէ իսկական իրեր:

Եւ թէ վիճաբայու փափարաց արձագանքին ձայները, կամ մեծակառոյց դմբեթայարկ շինուածներուն, թէպէտ ձայներուն զգալը զգայարանքներէն են, թէ անոնք վիճափոր այրերուն ձայնից հնչումն են, բայց ընդհակառակն զգայարանաց միջոցովը կիմանայ թէ իրենց ձայներուն անդրադարձութիւնն է արձագանք աւելոցներն:

Հոգին մտքին մէջ զգայարանաց զգացմամբը մէկ իրի մը վրայ չորս կերպ ընտրութիւն կը ներդործէ:

Ա. Թէ ի՞նչ իր է այն :

Բ. Թէ ի՞նչ որպիսութիւն ունի :

Գ. Թէ ի՞նչ որպիսութեան գործ է ,

Դ. Թէ ո՞ր ստեղծան է ի կարգ աշխարհի :  
Զորօրինակ .

Ա. Երբ կ'զգայ թէ անիկայ մեզը է :

Բ. Իրր որպիսութիւն՝ անոր քաղցրութիւնը  
կ'զգայ :

Գ. Իրր գործ որպիսութեան՝ ջրոյ ծարաւ-  
լու ստամբար բորբոքիլ տալը զգայ :

Դ. Որ մեզըը բուրին ու շաքարին մէջին ը-  
լալը կըզգայ :

Որովհետեւ իրերը մասնաւոր են , ու մէկիկ  
մէկիկ իրարմէ կը զանազանին , իրօք ալ , որ-  
պիսութեամբ ալ , գործով ալ , կարգով ալ :

Իրաց որպիսութիւնն ալ միօրինակ չէ , որը  
մերձաւոր է , որն ալ յատուկ , որն ալ հեռա-  
ւոր , և որն ալ հասարակ : Զորօրինակ , Մար-  
դուն մերձաւոր ու յատուկ որպիսութիւնը բա-  
նականութիւնն է . իսկ անոր կենդանի ու եր-  
կտանի ըլլալ , հեռաւոր ու հասարակ որպի-  
սութիւնն է :

Այս հեռաւոր ու մերձաւոր որպիսութեանց  
զանազանութիւնը իրերուն կարգը կըսուին :

Կարգ մի ալ կայ՝ որ հասարակ որպիսութեանց  
նման է , ինչպէս ծառոց տերեւը՝ հասարակ որ-  
պիսութիւն է :

Կարգ մի ալ կայ՝ որ յատուկ որպիսութեանց  
նման է , ինչպէս՝ ամեն տունիկեր՝ թէպէտ տե-



ըւեներ ունին, բայց ամենքն ալ նոյն տերեւոյ ձեւերը չունին. զի ամեն տունկեր առանձին տերեւներու ձեւերը ունին, որչափ աշխարհի մէջ անհամար տունկեր որ կան :

Զի մէկը միւսին ձեւը չունի. այլ ամենքն ալ առանձնական միութեամբ իրարմէ կը զատուին. որով իրերը իրարմէ որոշմամբ կը ճանչցուին ի տունկս :

Ուստի Միտքը՝ զանազան որպիսութեանց ընտրութեամբը՝ զգայարանաց ուղղութիւնը ու սխալանքը կը ճանաչէ, և անոնց կարգաց ընտրութեամբն ալ : Զորօրինակ, կրակին վրայ հալեցնելու ատեն՝ ոսկիին նման անօթ մի տեսնէ, բայց գիտնայ թէ անոր գինը ոսկիի արժողութենէն շատ վար է, շուտ մը միտքը կ'իմանայ թէ այն անօթը կամ ոսկեղօծ է, կամ ոսկեվայլ պղինձ :

Այս մտաց ընտրութեանը՝ կարգ իրաց կըսուի, որ կորոշէ ոսկեոյն ու պղնձոյն իրարմէ ունեցած արժողութեան տարբերութիւնը :

Այսպէս այն վերը զբուցուած մեղրին, շաքարին ու բուբին զատ զատ գիներ կորոշէ՝ արժողութեան համեմատ, թէպէտ ասոնք միօրինակ քաղցր ըլլալով՝ միևնոյն որպիսութիւնը ունին. բայց անոնց զանազան աստիճանաց կարգերուն համեմատ, մեղրին բուբէն աւելի քառասպատիկ արժողութիւն կուտայ, ու անկից եօթնպատիկ աւելի շաքարին արժողութեան գին :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Իրաց գաղափարներուն՝ մինչև ցարդ իմաստասիրաց կողմէն եղած կարծիքն, որոնք մտաց մէջն են ։

Իմաստասիրաց մէջ մինչև ցարդ իրաց գաղափարներուն վրայօք երկու կերպ կարծիք ունեցողներ եղան, թէ Հոգին մտաց իմացման մէջ ի՞նչպէս է ։

Ա. Պղատոնը եղաւ, որ կը հաստատէր, թէ Հոգին առանց բազկացութեան մարմնոյ իր մէջ իրաց գաղափարաց ծանօթութիւնը առաջուց ունի ։

Բ. Արիստոտել եղաւ, որ Պղատոնին այս գըրութիւնը բոլորովին կը ժխտէր, և կը հաստատէր թէ իրաց ծանօթութիւնները միայն զգայարանաց ազդեցութենէն մտաց մէջ գաղափար կը ձեւանան ։

Եւ Հոգին ծանօթութիւն մը չունի, կըսէր, քանի որ մարմնոյ հետ միաւորած չէ, միայն թէ զգայարանքները ինչ որ Հոգւոյն կազդեն, ա՛նոնք են միայն մտաց գաղափարները ։

Սակայն միտքը ի խոյզ քննութեան մտնելով, ասոնց ճշդութիւնը մեզի կազդէ, թէ իրաց ծանօթութիւնները, որոնք զգայութիւններէն անցնելով, իրաց գաղափարները մտաց մէջ կը ձեւացնեն, որոնք սկիզբէն Հոգւոյն մէջն են, իբր թէ ասիկայ իր զօրութիւնն է. որով իրերը ի-

քարու հետ համեմատելով, անոնց յարմարութիւնը ու անյարմարութիւնը կընտրէ :

Իսկ մարմնոյ հետ Հոգւոյն միաւորելէն ետքը՝ իրերը գաղափարելու համար, կերպարանաց ծանօթանալով միայն կըլլայ . այսինքն, Արեգակը ու անոր զանազան երեւոյթքը, բոլորակը, լոյսը, շառաւիղաց ճաճանչը, ու ջերմութիւնը : Ասոնք ամենն ալ զգայարանաց զգացմանց միջոցովը կըլլան :

Բայց զանազան երեւութից ընտրութիւնը Հոգիէն է սկիզբէն ի վեր առանց զգայարանաց ըզգացմանց . իմանալով թէ արեգական բոլորակութիւնը իրեն հարկաւոր մասը չէ, անոր լուսոյ ու ջերմին, այսինքն անոր կեցուցչին նման :

Զի եթէ արեգակը քառանկիւն՝ կամ անկիւնաւոր ըլլար, իւր ջերմութիւնը ու լոյսը պահելով, դարձեալ նոյնը կըլլար :

Հոգին ընտրութեամբ դատաստան կընէ թէ՛ արեւուն ջերմութիւնը երկրականաց կենդանական շարժման պատճառ է, բոյսերուն, տունկերուն, ծաղիկներուն, հոտերուն, և համերուն, և անոր լոյսը տունջեան ու ծաղիկներուն ու գոյներուն պատճառ է :

Այս ծանօթութիւնները մտաց քննութենէն են, ու զգայարանաց զգացումէն չեն :

Թէպէտ իրերուն կերպաւոր երեւոյթները՝ ըզգայարանաց զգացումէն են . զորօրինակ ջրով լեցուն կաթսայ մը կրակի վրան դրուած ըլլայ ու շուտ մը եռալ կսկսի, ու անոր սաստիկ բորբոս

քումէն , ջուրը պղպշակներով փրփրած , կաթ-  
սայէն դուրս թափուիլ կըսկսի :

Ահա հոս՝ այս գործողութիւնը մեզի ցոյց կու-  
տայ թէ , կրակին բորբոքմամբ ջրոյն դուրս թա-  
փելը զգայարանաց զգացմունքն են , և ասոնք  
իրաց կերպարանաց ծանօթութիւնները կըսուին-  
բայց Հողին ներքին ընտրութեան զօրութեամ-  
բը սկիզբէն ի վեր իր մէջ իրեն գիտնալով , ի-  
րաց ծանօթութեանց յարմարութեամբ ու ան-  
յարմարութեամբ՝ ջրոյն կաթսայէն դուրս թա-  
փուելուն պատճառը գիտէ , թէ կրակին սաս-  
տիկ բորբոքը պղպշակաց շատ փրփուրներ հա-  
նելովը , ջուրը դուրս թափեց :

Այսպիսի դէպքերու մէջ զգայարանաց ազ-  
դեցութիւնը մէկդի թողլով , ինքնիրեն պատ-  
ճառներուն վրայօք մտադիր կըլլայ գործողու-  
թեան մէջ . և այնուհետեւ կըսկսի վառարանին  
կրակը քիչցնել , այս ընտրութեան զօրութիւնը  
սկիզբէն ի վեր Հողւոյն մէջն է . որ նորա ճա-  
նաչման զօրութիւնն է . Այս ընտրութեան զօ-  
րութիւնը իրաց ու նոցա որպիսութեանց մէջն  
է . այսինքն , իրին՝ հանդամանաց՝ որպիսու-  
թեանց կարգաց ու զանազան աստիճանաց մէջ-  
իբր թէ որպիսութիւն յտուիկ և էական . և իբր  
որպիսութիւն հասարակ և պատահական , և  
կամ որպիսութեանց ու գործոց մէջ :

Այս ծանօթութիւնները մտաց դաղափար-  
ներէն են , զգայարանքներէն չեն , որովհետեւ  
միտքը շուտ մը զգալուն պէս շժանօթանար ,



այլ երկար քննութեան խուզարկութեամբը, ուր միտքը ընտրութեան զօրութեամբը ամենն ալ լու կը ճանչէ :

Այս կերպով ընտրութեան զօրութեամբը ի ծնէ համբեր ու խուլեր՝ խօսողներէն ու լսողներէն աւելի լու գիտեն, ինչ ծանօթութիւններ մարդոց մտաց մէջը կան :

Թէպէտ նոցա յիշողութեան մէջ խօսից դաղափարներու նկարները դատարկ են. բայց նոցա միտքը չեն հանդարտիր իմանալի խորհուրդներով զգացմանց ընտրութիւնը քննելէն, ինչ որ մարդկային լեզուով բնազանցական կարգի իմացուածոց վրայօք կը խօսուի. այսինքն, Աստուծոյ, Հրեշտակաց, Դիւաց, Արքայութեան, Դժոխոց, Հօր, Մօր, Եղբօր, Որդւոյ, Աղօթից, Կրօնից, և զանազան խտրութեանց վրայօք, և Քաղաքական Հանգամանաց, Դատաւորաց, Իշխանաց, Ազատաց, Ստրկաց, Ազգաց զանազանութեանց, և իրարմէ տարբերութեանց :

Նոյնպէս երախաներն ալ ընտրութեան զօրութեամբը ու քննութեան խորհրդովը ինքնիրեն լաւը՝ գէշը՝ բարին՝ չարը՝ օգտակարը՝ վնասակարը՝ սէրը՝ ատելութիւնը՝ դիւրանքը՝ արհամարհանքը՝ գեղեցիկը՝ տգեղը՝ պատիւը ու նախատինքը . . . և այլն կիմանան :

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՀՈԳԻՆ ՇԱՐԺԵԼՈՎ, Ի՞ՆՉ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆ  
ՅԱՌԱՋ ԿԸ ԲԵՐԷ.

Հոգին միշտ իր մէջ ճանչնալու ու խմանալու զօրութիւնը ունի, որոնցմով յառաջ բերած գործողութիւններն ասոնք են :

Ա. Զգայարանաց շարժմամբը՝ Հոգին ի զգացումն կը փոխուի :

Բ. Հոգին զգացումները ճանչելով շարժինէ, զգացումը կերպաւոր կըլլայ :

Գ. Երբ զգացումը ի ճանաչումն փոխուի, այն ատեն հոգին ի միտս կը փոխուի :

Դ. Երբո՞ղ զգացումները տուարկաներէն ի յօժարութիւն կամ յարճամարճանս շարժին, որ է բարի՝ չար՝ գեղեցիկ՝ տգեղ՝ օգտակար ու փաստակար, այն ատեն կերպաւոր զգացումը ի յօժարութիւն կամ յարճամարճանս կը փոխուի, և Հոգին ի կամս կը փոխուի :

Ե. Երբ զգայարանքները արտաքին առարկաները հոգւոյն ազդեն, և հոգին ալ ծանօթութեանց յարմարութիւնը ու անյարմարութիւնը ընտրութեան զօրութեամբը զգալու որ ըլլայ, այնպիսի զգացումը մտաց ճանաչումն կըսուի :

Զ. Այս զգացումը երբ տկարանայ ընտրութեան զօրութեամբը իր գիտութիւնը ձեռնարկելու համար, հոն ճանաչումն ըլլալ չըսուիր, այլ միայն սոսկ զգայարանաց զգացումն կըսուի :

Որով զգացումը երկուք կը բաժնուի . Զգացումն կերպաւոր , Զգացումն անկերպ :

### ԳԼՈՒԽ ԺԵ.

Ո՞րն է Զգացումն կերպաւոր , ու Զգացումն անկերպ :

Ա. Զգացումն կերպաւոր՝ մտաց ճանաչումն կըսուի :

Բ. Զգացումն անկերպ՝ Հոգւոյն սոսկ զգացումն կըսուի :

Զի եթէ միայն զգայարանաց զգացումներէն մտքին մէջ գաղափարեալ ծանօթութեանց ճանաչմունքն ըլլային , ըստ Արիստոտելի , մտաց մէջ գաղափարներ ի՞նչպէս կըլլային , համեմատեալ զանազանութիւնը ընտրելու կողմանէ , իրին ու հանգամանաց մէջ , կարգաց ու ընտրութեանց մէջ , պատճառաց ու դործոց մէջ :

Երբոր տեսնէ թէ եղեգը ջրոյն մէջ չընկղմիր , հոն զգացմունքը՝ եղեգան ջրոյ մէջ միայն չընկղմելը կը ցուցնէին , թէ եղեգան անկ է ջրոյ մէջ չընկղմելը , և չէ թէ անոր չընկղմելուն լուկական պատճառը , մէջի օգալից պարապութիւնը : Որովհետեւ զգացմունքը իրերը մինակ հանգամանքով յայտնի կընեն , և չկայ բզգալի նշան մը զանազանութեան ցուցման մէջ , իրին հետ , որպիսութեանց հետ , պատճառաց , դործոց , ու անոնց կարգաց հետ :

Ասոնք մինակ ընտրութեան զօրութեամբը կը

ճանչցուին , առանց զգայարանաց զգացմանց ։  
Եւ այսպէս միօրինակ զգայարանաց ազդե-  
ցութեանցը ամենուն ծանօթութիւնները իրար-  
մով կը հաւասարէին ։ Զի ամենուն ծանօթու-  
թեան անհաւասարութիւնը , անհաւասար զգա-  
յարանաց զգացումներէն չէ , ըստ որում իրարմէ  
անտարբեր ամենուն վրայ հաւասար զգացումներ  
կան ։ Բայց անհաւասարութիւնը՝ որով մին միւ-  
սէն իւր գիտութիւնը կ'առաւելու մի և նոյն  
զգացմամբ , ընտրելու զօրութեան կողմանէ է ,  
չէ թէ զգայարանաց զգացման կողմանէ ։

Բայց այս ամենը Հոգին իր մէջ ունի՝ անոնց  
յարմարութեան ու անյարմարութեան մէջ ընա-  
րութեան զօրութեամբը , թէպէտ կերպաւոր-  
եալ զգացմունք , մտքին մէջ զգայարանքներէն  
կը ծագին , բայց յարմարներու ու անյարմար-  
ներու մէջ ընտրութեան զօրութեամբը՝ իմաց-  
ւածոց իրարմէ զանազանութիւնը , թէ ընդհան-  
րոյ , և թէ մասնաւորի , թէ բնականի և թէ բը-  
նազանցականի մասին . ինչպէս Պետրոս և Մարգ-  
թադաւոր և թադաւորութիւն , վարդ , ծաղիկ  
և թիւերով ալ՝ հարիւր տասն , հազար և այլն .  
Հոգին իր մէջ սկիզբէն ի վեր իրմէն՝ իմացող  
էակի պէս իր էութիւնը հետ ունի , առանց ըզ-  
գայարանաց իրաց իմացմունքները նկարուելու ։



ԳԼՈՒԿԹ ԺԶ.

ՀՈԳԻՈՅՆ ԱՆՆԻԻԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ  
ՄԱՐՄԻՆԵՆ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

Ճիշդ չէ այդ խօսքը , թէ Հողին մարմնոյ բուն նիւթէն ըլլայ ։ Զի թէ Հողին մարմնոյն բուն նիւթէն ըլլար , նիւթականաց յատկութեան նըման , ուրիշ դատարկ վայր մը կը լեցնէր , և աշակերտաց վարժութեան ասեւն նախաժայրէն ուսմունքը կը պակսէին ։

Ոչ ալ անոր շէնքն տարրական կրակէն է , թէ որ այնպէս ըլլար , հիւանդութեան բորբոքած ատեն , մտքին մէջ գիտութիւնները չէին յաւելնար ։ Ոչ ալ կը պակսին երբէք , երբոր մարմնոյն տկարութեամբը ջերմութեան ուժին զօրութիւնը կը կորսնցնէ ։

Բայց որովհետեւ մարմնոյն բազկացութիւնը չորս նիւթական զօրութիւններէն յառաջ եկած է , ջերմութենէն , ցրտութենէն , խոնաւութենէն , չորութենէն , այսինքն հողէն , ջրէն , հուրէն , օդէն , որոնք մարմինը խմորելով , բոլոր մը կը կազմեն , միահատ անձնական միութեան , նիւթական՝ զգալի և իրական ։

Ա. կրակը որ է հուր , արեան երակներուն մէջ շրջան կընէ , և մարմնոյն շրջանակներուն մէջ իրեն տարածմամբը , կը պատրաստէ հոն մարմնոյն ձեւովը մաշկից ամբողջութեան կազմութիւնը ։

Բ. Օգրը շնչոյն փշելոյլը երակաց տարածու-  
թեան մէջ արեան շրջանն ընել տալու համար ,  
ջերմութեան բորբոքը կը տարածէ :

Գ. Զուրը մարմնոյն զանգուածը կը տարածէ :

Դ. Հոգը ոսկորներուն՝ ջիւերուն՝ մսերուն մէջ  
մարմնոյն կազմութեանը պնդութիւն կուտայ :

### ԳԼՈՒԽ ԺԷ.

#### ՈՒՐԻՇ ԿԵՆԳԱՆԵԱՅ ՄԱՐԲՆՈՅ ՎՐԱՅ

Ուրիշ կենդանեաց մարմինները՝ մարդուս  
մարմնոյն հեա հաւասար են , և ասոնք ալ չորս  
տարերքներէն կը բաղկանան :

Բայց մարմնոյն զօրութիւնը երկուք է , ի կըր-  
կին տեղ օթեւանելով , ի սիրտ , և յուղեղ :

Ա. Զօրութիւն մը՝ որ սրտին մէջն է , ջերմու-  
թիւն է , որ արեան երակներուն մէջ կը տա-  
րածի :

Բ. Զօրութիւն մը՝ որ ըղեղին մէջն է , ցրտ-  
թիւն է , որ ըղեղին ջլերուն մէջ կը տարածի :

Ահա ասոնք են մարմնոյն զօրութիւնները :

Եւ հոգին ասոնց սիրահար հաւասարաչափ  
զուգակշիռ բաղկացութեանը մէջ կը կենայ :

Ուստի թէ որ մարմինը ասոնց մատին կողմա-  
նէ այլայլի , այսինքն տասը հաւասար մասը հին-  
գի իջնայ , վեցը՝ չորսի , ութը՝ երկուքի , շուս  
մը զուգահաւասար կշիռը աստիճաններէն կայ-  
լայլի , որը քիչ՝ ու որը շատ , հոն անձին հի-  
ւանդութիւնը կը պատճառի :

Բայց երբոր ըստ բոլորին այլայլի, այսինքն, տասը թիւը՝ որ ունէր, մարմնոյն նոյն զօրութեանը վրայ տիրէ, ու միւսը անհետ ըլլայ, շուտ մը մահ կը պատճառուի, որ է չորս տարերայ իրարմէ քակտումը, որոնցմով մարմինը կը բազկանար, հոն անջատումն հոգւոյն է մարմնոյն կըսուի, և անձին անուամբ մեռանիլ ։

Եւ որովհետեւ հոգին մարմնոյ նիւթական գոյութեանէն վեր տարրեր բնութիւն ըլլալով, որ ինչպէս հիւանդութեան ատեն տկար կըլլայ մարմինը, և անձին առջի ուժը կը կորսնցնէ, ինչպէս ծերութեան ատեն ։ Բայց հոգին այնպէս չէ, այլ մարմնոյն տկարութեան և հիւանդութեան ատենն ալ, մտայ գիտութեան ու խորհրդոյ մէջ չ'այլայլիր ։

Ասկից յայտնի է թէ հոգին բնութեամբ աննիւթական գոյութիւն մի է, առանց նիւթական տարերայ խառնուածոյն ։

Բայց զգալի շնչոյն փշերովը, որով կենդանիները անձերնուն մէջ արեան երակաց ջերմութեամբը կը շնչեն, միապէս ամենքն ալ շնչաւոր կըսուին ։ և որոնք որ չեն շնչեր, անշունչ կըսուին ։

Ուստի ասոնք՝ որոնք որ նիւթական են, հաւասար երկու դաս կը բաժնուին, շնչաւոր և անշունչ ։

Բայց թէպէտ ամեն շնչաւորաց՝ մարմնոյն նոյն գործարաններն հաւասար են, բայց ճանաչման մասին ամենուն վրայ նոյն զօրութիւնը չկայ ։

ուսկայն անոնց զգայարանաց զգացմունքները հաւասար են . նոյնպէս և արեան երակներուն ջերմութիւնն ալ հաւասար :

Բայց ուրիշ կենդանեաց ողիները՝ որոնք ըզեղին ջերմութիւն մէջն են , հրոյ ջերմութեան խանձոտեալ ճառագայթէն կը շինուի . ուստի ճանաչման մէջ անոնց զգացմունքները , անոնց վրայ հրոյն խանձոտեալ ճառագայթներէն ըլլալը յայտնի են . այսինքն , դիշերութեան մթութեան մէջ լուսնոյ աղօտ լոյսը յայտնի է . որով թէպէտ երկրի վրայ լուսաւորութիւն կայ , բայց ժամանակը դիշեր է խաւար մթութեան մէջ :

Սակայն մարդուն Հողին լուսոյ զուտ գոյութիւնն է առանց տարրական հրոյն խանձոտած ճառագայթից խառնուածոյ . ինչպէս արեգական լոյսը ցոյնելուան ասէն անոնց իսկութեանը նման իրերը երեւցնելով :

### ԳԼՈՒԽ ԺԸ .

ԿԵՆԴԱՆԵԱՅ ՈՂԻՆԵՐԸ ՄԵՌՆԵԼԷՆ ԵՏՔԸ ԻՆՉ ԿԸԼԼԱՆ

Կենդանեաց ողիները մեռներէն ետե օդոյն մէջ ցնդելով կը վիշրին , աշխարհի բուն օդաջերմ տարերաց մէջ , նորէն նորոգ արտադրութեամբ իրարու կը դառնան թուական զանազան աստիճանաց համեմատ՝ կենդանեաց դասին հրոյն ջերմնաչափ գոյութեամբը՝ միաթիւ բուն աստիճանովը : Որովհետեւ ամենքն՝ թէե ոգւոց էութիւնը ջերմէն են , հրոյն ջերմութեան



նոյն աստիճանաց կշռովը չեն , ապա ջերմնաչափ աստիճանին թուական զանազանութեանը համեմատ . որով ամենքն ալ բիւրաւոր կերպով զատական միութեամբ իրարմէ կը զանազանին՝ աշխարհի թուոյ կարգովը . ուր անոնց մէջ մին իբր միութեան սկիզբն է կենդանեաց թուոյն հաշւովը իբր առաջին . և միւսն իբր կատարած անոնց բազմութեան թուոյ հաշւովը . ուրիշներն ալ կարգին համեմատ իրարու ետեւէն սկզբան ու կատարածին մէջ , որոնք կենդանեաց մէջ տեսակին բազմութեան լրութիւնը կամբողջացնեն :

Այսպէս ալ տնկականաց կարգին մէջ , և բոլոր դոյացական իրաց զանազանեալ թուական կարգ մը կայ , զատական միութեան բազմութեան նոյնական կարգովը . ինչպէս զատական միութեամբ՝ թուոյ աստիճանաւ ամենքն ալ իրարմէ կը զանազանին մինչև ցբիւրս բիւրուց :

Այսպէս էական արարածոց կարգովը անոնց աստիճանաց զանազանութիւնը թուական հաշւոյն կարգին համեմատ է . միայն ամբողջապէս ամենուն թուական հաշիւը տէրը ինք դիտէ , և անոնց մէջ առանձին առանձին զատական միութեան հաշւոյն կարգովը :

Ապա էութեան զանազան աստիճանաց կշռոյն համեմատ՝ տարրական ջերմութեան աստիճանաց թուական տարբեր հաշւովը , որ երկրականաց կենդանական շարժման ողին է , աստիճանաւոր դոյութեան արտադրութեամբը յարմարելու կրտսիպուն կենդանեաց մէջ . որովհետև անոնց

այնպէս ըլլալու իրական ստուգութիւնն է . զի զգայութեամբ գիտենք՝ ջերմութեան օգտաչափ գործիքով, արեգական ջերմութեան զանազան աստիճանաց համեմատ՝ տունկերու մէջ զանազան իրեր կարտագրին բուսոց մէջ, ծաղկանց մէջ, սրտոց մէջ, նաև ասոնցմէ զատ իրարմէ տարբեր ու զանազան գաւառական իրաց այլայլութիւնը, ուր անոնք միայն հոն կը աւանուին, և ոչ ուրիշ տեղ անոր նմանը : Զարօրինակ ,

Ափրիկէ գաւառը արմաւը կը տեսնուի, և անոր ցրտային հիւսիսակողմը գաւառին մէջ չը գտնուիր . ուր Ափրիկէ գաւառին ջերմութեան կշիռը համակշիռ չափով հոն չ'ներգործեր :

Այսպէս ալ ամեն գաւառներուն մէջ իրաց այլայլութիւնը զանազան է, ջերմութեան թուական աստիճանաց համեմատ :

### ԳԼՈՒԽ ԺԹ.

ՄԱՐԴՈՒՅ ՀՈԳԻՆ ՄԵՌՆԵԼԷՆ ԵՏԵՒ Ի՞ՆՉ ԿՐԼԼԱՅ

Մարդուս հոգին՝ թէ որ մարմնոյն տարրական հրոյն ջերմութեան խանձոտեալ ճառագայթից ազտեղութենէն մաքուր մնայ, իւր համաբուն տեղին կերթայ :

Որովհետեւ լոյսը ու ջերմութիւնը իրարու համազգի են, փրարու դիւրաւ կը խառնուին :

Թէպէտ հուրը ի լոյս երբէք չ'խիսուիր, բայց լոյսը ի հուր դիւրաւ կը փոխուի, անոր միջնորդական ճառագայթից միջոցովը :

Ըստ որում ընթացը և հուրը իրարու ազդակից են ,  
անոնց երկուքին ճառագայթից ստածառաւը :

Ուստի հոգին իւր համարուն տեղը կերթոյ  
մարմինը մեռնելէն ետեւ , մինչ իւր վճիտ սրայ-  
ծառ լուսոյ գոյութիւնը՝ հրոյ խանձոտեալ ճա-  
ռագայթէն արատաւորելու ազատելութիւն մը չը  
բերէ :

Առ այս հայի և բան առաքելոյն :

«Մարմին ցանկոյ հակառակ հոգւոյ , և հո-  
գին ցանկոյ հակառակ մարմնոյ» :

«Ի տկարանալ միոյն՝ անդէն և միւսն զօրու-  
նայ» :

«Յորժամ տկարանամք (մարմնով) , յայնժամ  
զօրանամք (հոգւով)» :

Եւ Քրիստոսի վերկուծեան հաւատքը՝ այս  
հիմով կը հաստատին . այսինքն , մկրտութեան  
խորհրդովը մարմինը մեռուցանել , և հոգին  
կեցուցանել : Զորօրինակ .

«Թաղեցայք մկրտութեամբն ի մահ . . . որով  
թրիատեցայք զանձեռագործ թլփատութիւնն  
բաժանմամբ մարմնոյն , յաւուրն վերկուծեան» :

Այսինքն ի մկրտութեան :

«Եթէ Քրիստոս ի ձեզ է , ապա մարմին մեռ-  
եալ է վասն մեզայ . և հոգին կենդանի է վասն  
արդարութեան» :

«Այլ դուք մեռայք մարմնովն Քրիստոսի : Ըս-  
տանէք զանդամն ձեր երկրաւորս» :

«Եթէ մեռայք ընդ Քրիստոսի , զի՞ ևս իբրեւ  
զկենդանիս շիջիցիսք» :

«Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցայք , ի մահ անդր նորա մկրտեցայք , թաղեցայք ընդ նմին և յարեայք» :

«Այլ այսուհետև ոչ էք մարմնով , այլ հոգւով . զի եթէ մարմնով կեցջիք , մեռանելոց էք . իսկ եթէ հոգւով զդ օրծս մարմնոյ սպանանիցէք կեցջիք : Զի եթէ զոր քակեցի , զայն միւսանգամ շինիցեմ . ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երեւեցուցանեմ» :

«Այլ որ այժմն կեամ մարմնով , հաւատով որդւոյն Աստուծոյ կեամ» :

«Զի զոր ինչ սերմանէ մարդ , զնոյն և հնձեացէ . որ սերմանէ ի մարմին իւր , ի մարմնոյ անտի հնձեացէ զապականութիւն , և որ սերմանէ ի հոգին , ի հոգւոյ անտի հնձեացէ զկեանսն յաւիտենից» :

«Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջին գնացից զմարդն հին զապականեալն ցանկութեամբ խաբէութեանն , և նորոգիլ հոգւով մտաց ձերոց , որ ըստ Աստուծոյն հաստատեալ է . արդարութեամբ , սրբութեամբ ճշմարտութեանն» :

«Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի ի տարերց աշխարհիս , զի՞ ևս իբրև զկենդանիս աստէն աշխարհի կրօնաւորիք» :

«Խորհուրդ մարմնոյ մահ է , և խորհուրդ հոգւոյն կեանք» :

«Զի եթէ ըստ մարմնոյ կեցէք , մեռանելոց էք . իսկ եթէ հոգւով զդ օրծս մարմնոյ սպանանիցէք , կեցջիք» :



«Ձի որ հոգւոյն Աստուծոյ վարին, նորա են որդիք Աստուծոյ» :

«Ձի եթէ տնկակից եղեալք նմանութեան մահու նորա, այլ ե յարութեան նորա լինիցիմք» :

«Նոյնպէս և դուք համարեալիք զանձինս ձեր մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» :

Գռ. Ե. 17 : Բ. Կռ. ԺԲ. 10 : Հռ. Է. Զ. 4 : Կռ. Բ. 11 : Հռ. Է. Ը. 10 : Հռ. Է. Լ. 4 : Կռ. Գ. 5 : Հռ. Է. Զ. 8. Գռ. Գ. 27 . . . և այլն :

### ԳԼՈՒԽ Ի .

ՄԱՐԿԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ Ի՞՞՞՞՞՞՞ ԿԵՐՊՈՎ ՓԱԹՈՒՍ

ԿՐՆԱՅ ՏԱԼ ԱՅՍ ԽԱՌՆԱԿՈՒԹԵՆԷ՛Ն

Կրօնից կարգովը, և բարոյականութեան օրինօք, որոնք մարդը կը կրթեն կենդանեաց կերպով ու անոնց բնութեան նման չվարուելու :

Որոնց բնատուր յատկութիւնն է՝ առանձին ինքնիրեն բռնի մղանօք մեր բանաւորութեանը գէմ անվայել դէշ գործերու հեաւելի, տարրական հրոյն խանձոտած ճառագայթից պատճառէն գրգռուելով :

Իսկ բարոյական կրթութիւնը Հոգւոյն լուսավայլ որբութիւնը նախագոյ պարզութեան մէջ պայծառ լուսոյ նման պահել կուտոյ առանց արատաւոր ազտեղութեան մարմնոյն, որոնք ընդ գէմ խղճի մտաց կրիւք կը յօժարին անձին անխորհուրդ գործողութեամբը :

Եւ արդէն յայանի էր թէ երկիւղ ու սէր , սրտին ջերմութեան սեպհական դործն են , բայց ամօթ ու պատկառանքը՝ մտաց գոյութեան գործն են , նորա լուսովը՝ աղտեղութեան խորհրդոյ մէջ :

Ուրիշ կենդանեաց մէջ պայծառ մտաց լուսոյ գոյութիւնը չկայ , այլ միայն տարրական հրոյ ջերմութեան խանձոտած ճառագայթները :

Որովհետեւ սէրը ու երկիւղը ուրիշ կենդանեաց մէջ կան , բայց ամօթոյ և պատկառանաց խորհուրդը՝ որ մտաց արգասիքն է , զաղիւր աղտեղութենէն փախչելուն , անոնց մէջ բնաւ չը կայ , թէ որ ըլլար , անոնք ալ մեզի պէս մտքով խորհրդոց մէջ կը հաստատուէին :

### ԳԼՈՒԽ ԻԱ.

#### ԸՂԵՂԻՆ ՎՐԱՅՕՔ ԽՕՄՔ

Ըղեղը ջերմուն նիւթական կազմութեան պատրաստուած խմոր մի է . որով չորս կերպ մարմնոյն մէջ զանազան գործիք կը կազմուին , որոնք նիւթ հիւսուածոյ՝ գործիք շարժման՝ գործիք զգացման՝ խողովակ հիւթաշարժ կըսուին :

Ա. Հիւսուածոյ նիւթով՝ մարմնոյն թէ ներսի՝ և թէ զանազան կերպաւոր ձեւերը , Հոգին իւր բնական շարժմամբը ջղային մանրաթել հիւսուածով կը կազմէ :

Այս ջղային հիւսուածոց մէջ՝ Հոգւոյն զգաց-

ման զօրութիւնը հիմնեալ կը հաստատուի , յարաշարժութեամբ ըլեղէն տարածուած , ցրտաշունչ փչման հեղանիութ խոնաւութեամբը , որ կըսուի տարածական զգացում . և ասով մարմնոյն բոլորտիքը՝ թէ ներսի և թէ դրսի եղած զատական միաշար մասերուն ցաւը , խոցը , վէրքը , բորբոքեալ ջերմնական տապը , ուժը , տկարութիւնը , և շոշափողական զգայութեան առարկաներն ալ , ծանրը , թեթեւը , չորը , թացը , ցուրտը , ջերմը , կոշտը , կակուղը , հաստատը , կզգայ ու կիմանայ :

Բ. Շարժման գործիքը՝ մարմնոյն կազմութեան զանազան յօդուածոց կապերն են . զատական զանազան փշեալ մասերը կապելով աղխաղխամամբ՝ Հոգին մարմնոյն միակազմ հաւաքական բովանդակութիւնը կամբողջացնէ :

Այս շղային յօդակապներուն յարմարութենէն՝ մարմնոյն ուժը ու տկարութիւնը կըլլայ . և կենաց երկարութեան ու կարճութեան՝ ախտից ու առողջութեան արժարժիչ միջոցները ասոնք են :

Գ. Զգացման գործիքը ըլեղէն տարածուած մանրաթել շղերն են :

Եւ որովհետև ամեն տարածութիւն երկու ծայր ունի , ու երկու ծայրերուն միջոցը մէկ է , որոնք ծայր սկզբան՝ և ծայր կատարածի կըսուին , և միջոցն ալ տարածութիւն շարունակ կըսուի :

Ծայր սկզբանը՝ ըլեղին միջածոց վայրէն կակսի տարածմամբը՝ զգայարանաց մէջ կը դադարի :

Մայր կատարածին՝ ըզեզէն տարածուած ջղերուն վերջաւորեալ եղերքներն են մինչև զգայարանաց ծոցախայրը :

Շարունակ տարածութիւնը ջղերէն կազմուած խողովակներն են . մէջը ցրտաշունչ փշման հեղանիւթ խոնաւութեամբ լեցուն :

Այս հեղանիւթից մէջ՝ իմանալի եղանակաւ հոգւոյն զգացման զօրութիւնը աննիւթական կերպով ոգիաձիգ յարակայ շարժումը ունի :

Երբ որ արտաքին իրաց ներգործական շարժման աղդեցութիւնները այս վերջաւորեալ ջղերուն դարնեն , այն աստե՛ն ջղերուն ծայր կատարածին՝ կրաւորական շարժմամբ զգալով արտաքին իրաց աղդեցութիւնները , դէպ ի՛նքրա կը սեղմուի մէջի եղած զգացման զօրութիւնը մինչև ըզեզին միջախայր ծոցին ծայր սկզբանը . և անկից նորէն յետադարձ կըլլայ ներգործական շարժմամբը մինչև ծայր կատարածին զգայարանաց մէջ միջնորդական սատարիչ եղանակաւ սրաին շարժմանը . և անով արտաքին գործքեր յաւաջ կը բերէ զգայարանաց զանազան ու յարմար կերպով : Զսրօրինակ , երբ որ լուն խածնէ մարմնոյն մէկ մասը , այն աստե՛ն զգացման զօրութիւնը կրաւորական շարժմամբ դէպ ի ըզեզն սեղմելով , ցաւը մտաց կազդէ . և մտք՝ ներգործական շարժմամբ զգացման զօրութիւնը յետադարձ ընելով միջնորդաւ սրաին մինչև ի նոյն համասպառչած զգայարանքը , ուր որ մտաց խորհրդական դիտաւորութեանը կը հայի , որպէս



իւր գործոյն նպատակին , ու հոն լուն ճմելու գործը յառաջ կը բերէ : Իսկ տարածեալ ջրաց մէջ յարամնայ զգացման զօրութեան կենդանական շարժումը՝ չեզոքական շարժում կըսուի :

Դ. Խողովակ հիւթաշարժ՝ որ նախ երակներն կիմացուի , ջրային զանգուածով խմորուած սրբատէն կը տարածուի մինչև մարմնոյն շրջաւորեալ պարագիծ բոլորաիւրը . ուր որ ջերմնաշունչ փրչման զանգուած հեղանիւթիւ իրարու հետ օղակաւոր գնդաձև կցորդական շարժմամբը արեան հողափշրանայ ծանրութեան , որով արեան յաշարժ շրջանը՝ մարմնոյն զարգացման ու հասակին տահմանեալ աճման համար կը շարունակի : Եւ միւսներն ալ լանկէկ խողովակներն են , որ սրտէն տարածուած դէպ ի ներքին զանազան գործարաններն . որոնց մէջէն կենսական հիւթերը ջերմնաշունչ ոգելից փշման բորբոքեալ տապով սրտին , ցրտաշունչ փշման ըղեղին խոնաւուտ ոգեծիգ տարածմամբը կը շարժին դէպ ի ներքին գործարանները , ու անկից դէպ ի արտաքին զգայարանքները զանազան յօդուածական մասանց մարմնոյն՝ անոնց շարժմանը համար :

Այս երկու զօրութեանց ոգեծիգ շնչախառն փշման , թէ ջերմութեան և թէ ցրտութեան հաւասարական զուգընթաց շարժմամբը , մարմնոյն առողջութիւնը կը պատճառի . իսկ անհաւասարութենէն՝ կամ ջերմութեան քան զցրտութիւն , և կամ ցրտութեան՝ քան զջերմութիւն առաւել ըլլալով , ախտարժարժ հիւանդութիւնը

կը պատճառի մարմնոյն կազմութեան զանազան  
մասանց մէջ :

### ԳԼՈՒԽ ԻԲ.

#### ՄՏԱՅ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԽՕՍԲ

Հոգին մտաց գոյութիւնն է աննիւթական ի-  
մանալի էութեամբը . որ էապէս երկու զօրու-  
թիւն ունի : Ա. շարժումն , Բ. իմացումն :

Ա. Շարժմամբը կեանքը կը պատճառէ սրտին  
մէջ :

Բ. իմացմամբ միտքը կը կազմէ ըզբզին մէջ :

Կենաց զօրութիւնը՝ Հոգւոյն շարժումն է , որ  
արմատաբար սրտէն կը տարածի արեան ջերմու-  
թեամբ երակներուն մէջէն անցնելով մինչեւ  
մարմնոյն բոլորտիքը :

Հոգին ըզբզին մէջ՝ մտաց իմացմունքը գոյու-  
թեամբ լուսոյ կը կազմէ :

Եւ զգայարանաց մէջ՝ զգացմունքը կը շինէ  
ճաճանչաճիգ ճառագայթներով :

Որովհետեւ այս տարածեալ բազմագիծ ճա-  
ռագայթները՝ որպէս շառաւիղ լուսոյ գոյու-  
թեան մտաց , ջղերուն մէջէն մէկ ծայրը ըզբ-  
զին մէջն է , որ կըսուի կէտ տեսութեան և  
ծայր սկզբան :

Եւ միւս ծայրը՝ զգայարանաց մէջ կը դադա-  
րի , որ կըսուի կէտ հայեցուածոյ և ծայր կա-  
տարածի :

Այս ծայր կատարածիս մէջ իմանալի ողելից էութիւնը կէտ հայեցուածոյին մէջ կրաւորակերպ կը շարժի արտաքին իրաց ներդործական ազդեցութիւններէն, և այն ատեն ջղաց մէջ եղած տարածեալ զօրութիւնը, դէպ ի ըղերչն սեղմելով, կէտ տեսութեան մէջ կը ապարորի. և անկից նորէն յետագարձ ըլլալով, կրկին կը տարածի դէպ ի զգայարանքը, որ կըսուի ներքին անդրադարձութիւն :

Այս անդրէն տարածումը՝ ներդործական շարժումն կըսուի :

Որպէս լուին խածնելուն ցաւը կրաւորական շարժմամբ զգալով կազդէ մտաց սեղմեալ ճընշմամբ :

Այն ատեն անդրադարձ ներդործական շարժմամբը լուն կը ճմլէ զգայարանօք. Բայց ջղաց մէջ յարամնայ զօրութիւնը, որ է տարածեալ լուսոյ ճառագայթները՝ գոյութիւն մտաց, շարժումն չեղոքական կըսուի :

Կէտ հայեցուածոյին մէջ եղած զգացմունքները՝ նիւթական գաղափար կըսուին. Նախնական՝ մասնաւոր՝ իրական՝ բնական՝ զգալի՝ հիմնական՝ նոյնական՝ զատական և յատուկ :

Եւ կէտ տեսութեան մէջ եղած իմացմունքները՝ կըսուին գաղափար տեսական՝ երկրորդական՝ ընդհանուր՝ խորհրդական՝ բնազանցական՝ իմանալի՝ մակերզուտ՝ հաւասարեալ և հասարակ :

Մտաց կանոնական օրէնքը՝ որով մասնաւորը ընդհանուր կը շինէ , երեք կերպ են . որ հրաժարեցուցումն , վերացուցումն , վերըմբռնումն կըսուին :

Շատ մասնաւորներուն հաւասարեալ հանդամանքները հրաժարեցնելով , ինչպէս թեւը և թռչիլը , աղունիէն՝ ագուաւէն՝ արծիւէն և ուլուցմէն հրաժարեցնելով , մէկ իմաստի մը մէջ կը ժողուէ . այս է՝ թեւաւորն թռչի , որ վերացուցումն կըսուի :

Եւ այս երկուքով կազմուած իմաստը՝ դարձեալ մէկ գաղափարի մը մէջ կամփոփէ . որ է թռչուն որ կըսուի վերըմբռնումն :

Եւ կէտ տեսութեան մէջ՝ միտքը այն մէկ ընդհանուր գաղափարաւ շատ ցրուեալ զատական մասնաւորները կ'իմանայ , իբր թէ նոյն թռչնոց իմացուած յտակութիւնները՝ ամենքն ալ ունին . թէ և անոնց վրայ զգալի եղանակաւ միահաղոյն երկուքն ալ չզգայ . միայն թէ կամ նմին պատշաճեալ դոյութեան անունը միայն լսելով , և կամ թէ անծանօթ դոյութեան մը վրայ վերացուցման իմաստից երկուքէն մէկը զգտլով . այսինքն է , կամ թեւը և կամ թռչիլը , միով միւսը կ'իմանայ . թէպէտ մին շարժեալ իցէ ծանօթադոյն իմացմամբ , և միւսը գաղարեալ անծանօթ իմացուածով , որպէս թէ որ թեւ ունիցի , ապա թռչի . և որ թռչի , ապա ունի թեւս :

Որ բնազանցական ընդհանուր և խորհրդական գաղափար ալ կըսուի :



Բնազանցական ընդհանուր գաղափարները՝  
փոխադարձ կրլլան, որ կ'անդրադառնան իրա-  
քու հետ. որպէս՝ թեւաւորն է թռչուն. և թըռ-  
չունն է թեւաւոր : Իսկ բնական և մասնաւոր  
գաղափարները, անփոխադարձ կրլլան, որ մէկ  
մէկու հետ չեն անդրադառնար, որպէս՝ աղաւ-  
նի է թռչուն. թռչունն է աղաւնի : Արեգակն  
է բոլորակ, բոլորակն է Արեգակ : Չիւնն է ըս-  
պիտակ, սպիտակն է ձիւն : Մարդն է զգայուն,  
զգայունն է մարդ :

---

Գաղափարները մէկ իրին կամ գոյութիւնը կի-  
մացնեն և կամ հանդամանքը :

Երբ մէկ իրին գոյութիւնը ցուցնէ, ենթա-  
կայ կըսուի :

Եւ երբ հանդամանքը ցուցնէ, Տրամաբանա-  
կան կանոնօք ստորոգեալ կըսուի : Որպէս՝ ա-  
ղաւնին է թեւաւոր. հուրն է ջերմ. ջուրն է  
հեղուկ, քարն է ծանր, արեգակն է բոլորակ,  
և այլն :

Այս երկու գաղափարները կցորդեալ համան-  
դամայն իմացմամբ, որպէս թէ՛ ենթակայ ստո-  
րոգելոյն հետ, նախադասութիւն կըսուի, որ  
անկից ալ ուրիշ իմաստ կը ծագի, և կամ ծա-  
նուցեալէն մէկ անձանօթ իմաստ մը կը հետեւի  
մակաբերական շաղկապով, որ եղբակացութիւն  
կամ հետեւութիւն կըսուի. զորօրինակ, աղաւ-

նին է թեւաւոր , ապա աղաւնին թռչի : Տրամաբանական նախասութեան մէջ առջի իմաստը քերականութեան կանոնօք վերջադաս կըլլայ պատճառական շաղկապաւ . զորօրինակ , թեւաւոր է , թռչի : Ի կանոնս քերականութեան , թռչի , քանդի է թեւաւոր :

### ԳԼՈՒԽ ԻԳ.

Զգայարանքներն ի՞նչ օգուտ ունին :

Զգայարանքներն մեր մէջ Հոգւոյն շարժմանը շղերով կ'օժանդակեն :

Զգայարանաց զգացումը քանի՞ են :

Երկուք . Զգացումն կերպաւոր , Զգացումն անկերպ :

Ո՞րն է Զգացումն կերպաւոր :

Կերպաւոր Զգացումը այն է , որով Հոգին ըզգայարանաց շարժմամբը կ'իմանայ իրերուն իսկութիւնը , անոնց որպիսութեան հանգամանքներովը մէկ տեղ . զորօրինակ , երբոր ցաւ մը կ'զգամք , լուին խածուածը ըլլալը կ'իմանամք :

Ո՞րն է անկերպ Զգացումը :

Անկերպ Զգացումը այն է , որ թէպէտ Հոգւով կ'իմանամք զգայարանաց շարժումը , բայց կ'անգիտանամք խորհրդով՝ մեր իմացման մէջ անոր պատճառը , թէ մեր Հոգիին ի՞նչ ազդել կուզէ . զորօրինակ , խօսակցութիւն արարացւոյն Հայոց քով :

Անկերպ զգացումը քանի՞ են :

Երկուք են . հնարաւոր , անհնարին :

Ո՞րն է հնարաւոր զգացումը :

Հնարաւոր զգացումն այն է , որ զմեզ ծանօթացնել կուտայ , որով զգացումը կըլլայ կերպաւոր :

Ո՞րն է անհնարին զգացումը :

Անհնարին զգացումը այն է , որով անհնարին է մեզ առանց ծանօթական ուսման մէկ բանի մը վրայօք մտքով տեղեկութիւն մը ունեցած ըլլալ :

Իրերը մեր մտաց մէջ անկերպ զգացմամբ չեն գաղափարիր , թէ և անոնք մեր զգայարանաց ենթակայ եղած ալ ըլլան . մինչև որ մեր ըզգայարանաց զգացմունքը , խորհրդով՝ իրաց վրայ շարժած ատենը չկերպաւորիր , անոնց պատճառներուն ու որպիսութեան հանգամանքէն :

Ուստի կերպաւոր զգացումը Հոգին ի միտս կը փոխէ , երբ զգացմունքը ի ճանաչումն փոխուին : Եւ Հոգին ի կամս կը փոխէ , երբ զգացմունքն հաճոյից յօժարութեանը կը փոխուի :

Իրաց իսկական ճշմարտութիւնը՝ զգացումը ճանչնալու կը կերպաւորէ , բայց բարին՝ օգտակարը՝ գեղեցիկը՝ զգացումը հաճութեան կը կերպաւորեն . և անոնց ներհակները՝ չարը՝ վրնասակարը՝ տգեղը՝ զգացումը արհամարհելու կը կերպաւորեն :

Իսկ անկերպ զգացումը Հոգւոյն զօրութեանը մէջ սոսկ զգացումն է :

ՓԼՈՒԽ ԻՊ.

Գաղափարաց տեսակները քանի՞ են :

Իրաց ճշմարտութեան արտաքին հանգամանքները հինգ են . զորօրինակ , Երեւոյթ՝ Չայն՝ Համ՝ Հոտ՝ Թանձրութիւն և մարմնեղ . որոնք մեր զգայարանքներուն մօտենալովը Հոգւոյն շարժումը կը շարժեն զանոնք իմանալու համար :

Բայց իրերուն հինգ հանգամանաց ճշմարտութեանը համեմատ , մեր վրայ հինգ տեսակ ըզգայարանք կան . զորօրինակ . Տեսանելիք , Լըսելիք , Ճաշակելիք , Հոտոտելիք , Շոշափողականք :

Ա. ԵՐԵՒՈՒԹԻՅ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՐՈ՛ՆՔ ԵՆ

Երեւութից տեսակները՝ որոնք տեսանելեաց առարկաներն են , ասոնք են : Զորօրինակ , հեռին , մերձը , ուղիղը , ծուռը , բարձրը , խոնարհը , դեղեցիկը , տղեղը , մեծը , փոքրը , շարժունը , հաստատը , ձեւը , կերպարանը , թիւը , հիւանդը , առողջը , նիհարը , ուժեղը , մեռեալը , կենդանին , արուն՞ , էղը , մասը , բոլորը , սիկիղը , կատարածը , երկարը , կարճը , ուրախը , սրտումը , մաքուրը , աղտեղին , թափանցիկը , դիմահարը , պատկերը , իսկականը , յաճախը , նուազը , նորը , հինը , սառեւը , իրը , տարրը , խառնուրդը , կարգը , անկարգը , դա-



տարկը , լին , լոյսը , խաւարը , գոյնը , նշանա-  
գիծ գրոց , թուոց :

Բ. ԶԱՅՆԻՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

Չայնից տեսակները՝ որոնք լսողութեան ա-  
ռարկաներն են , ասոնք են : Զորօրինակ , ձայնը ,  
հնչումը , բարբառը , խօսքը , երգը , ողբը , լա-  
ցը , աղաղակը , խնդու թիւնը , թշնամանքը , հայ-  
հոյանքը , կաղը , գոլխատը , պարսաւը , աղօթ-  
քը , օրհնութիւնը , ու անէծքը :

Գ. ՀՈՏՈՅ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

Ասոնք են՝ որոնք հոտօտելեաց առարկաներն  
են : Զորօրինակ , ախորժեւլին , անախորժը :

Դ. ՀԱՄՈՅ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

Համոց տեսակները ասոնք են , որոնք ճաշա-  
կելեաց առարկաներն են : Զորօրինակ , համեղ  
անհամ , անոյշ , լեղի , կծու , աղի , անլի , կարծր ,  
կակուղ . . . ևլն :

Ե. ԹԱՆՁՐ ՄԱՐՄՆԵՂ ԻՐԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

Ասոնք են , որոնք շոշափողականին՝ առարկա-  
ներն են : Զորօրինակ , ծանրը , թեթեւը , կար-  
ծրը , նուրբը , մեղկը , հաստը , ջերմը , ցուրտը ,  
թանձրը , չորը , խոնաւը :

### ԳԼՈՒԽ ԻԵ.

ՀԱՍԱՐԱԿ ԶԳԱՅՈՒԹԵԱՆ ՈՐՈՒՆ ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐԸ  
ՄԱՐՄԵՆՈՅՆ ՇՐՋԱՊԱՏՆ ԵՆ ԱՌԱՐԿԱՆԸՐԸ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

Ստոնք են , զորօրինակ , ցաւը , խոցը , վէրքը ,  
կիզումը , հիւանդութիւնը , ուժը , տկարութիւ-  
նը , վիշտը , տաղնապը , առողջութիւնը , ջեր-  
մութիւնը , ցրտութիւնը , ուռոյցքը , բորբոքը ,  
թմրութիւնը , լքումը և հանգիստը :

### ԳԼՈՒԽ ԻԶ.

ԱՍՈՆՅՄԷ ԳՈՒՐՍ Ի՞ՆՉ ՇԱՐԺՈՒՄ ԿԱՅ

Նաև կայ շարժումը՝ որ ժամանակաց չափո-  
վը անդգալի կըսուի , զոր Հոգին կզգայ անձին  
կենդանական շարժմամբը , մարմնոյ յաջորդա-  
կան շարժման համեմատութեամբը , զորօրինակ ,  
ունդն ի ծառ , ծառն ի յունդ . տղայն ի ծեր ,  
բայց ոչ ծերն ի տղայ :

ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻՆ

# ՅԱՆԿ ԳՐՈՅՍ

ԵՐԵՎ

Ծանօթութիւն , Տրամաբանութեան երկարութեան համար	3
Ֆիզիկայի ցեղական պատմութիւն	5
Կենսագրութիւն Ֆիզիկայի	11
Համառօտ նկարագրութիւն աքսորանաց Ֆիզիկայի	14
Դարձ Ֆիզիկայի յաքստորանաց ի Պօլիս	21
Տեղեկութիւն հրատարակչին , Տրամաբանութեան հանդամանաց վրայ	26
Սկիզբն Տրամաբանութեան	29
Ազգ հեղինակին , իւր Տրամաբանութեան վրայ	33
Նախ ծանօթութիւն արարածոց վրայ	37
Երեւելիք քանի՛ են	38
Գոյացութեանց տեսակը քանի՛ են	39
Աննիւթական երեւելիք որո՞նք են	41
Աներեւոյթք նիւթականք որո՞նք են	41
Երեւելի էակները ո՞ւր են	42
Պարզութեան ու բաղադրութեան էակաց վրայ	45
Հրեշտակաց ու հոգւոց վրայ	46
Մարմնականաց վրայ	50
Մարմնոյ ու հոգւոյ յատկութեանց վրայ	51
Հոգւոյն գոյութեան ու անոր հանդամանաց շարժման վրայ	52
Հոգւոյն զգացմանը վրայ	53
Իրաց գաղափարաց վրայ	58
Հոգւոյն շարժմամբ յառաջ բերած գործողութեան վրայ	62
Կերպուոր զգացման վրայ	63
Հոգւոյն աննիւթականութեան վրայ	65

Ռւբիշ կենդանեաց վրայ	66
Կենդանեաց ողիները մեռնելէն ետքը թնչ կըլլան	68
Մարդուս հոգին մեռնելէն ետեւ թնչ կըլլայ	70
Մարդկային բնութիւնը խառնակութենէն ինչ կերպով փախուստ կրնայ տալ	73
Ըղեղին վրայօք խօսք	74
Մտաց գոյութեան վրայ	78
Զգայարանաց օգտին վրայ	82
Գաղափարաց տեսակները քանի են	84



## ՎՐԻՊԱԿՔ

ԵՐԵՍ	ՏՈՂ.	ՄԻԱԼ.	ՈՒՂԻՂ.
23	24	. . . ֆիւշ-ի	շ-բիւ ֆիւշ-իւ
35	4	գեր-շնցիւ	գեր-շնցիւ
—	46	ի ն-ց-ն	ի ն-ց-նց
—	—	շ-իւն-իւցի	շ-իւն-իւցից
55	40	—-գր ֆը -ւ ՂԵԼԵՅ	—-գր ֆը -ւ րե-ն ՂԵԼԵՅ
64	24	իբ ե-ն-ի-նը հեռ	իբ ե-ն-ի-նը հեռ.
65	4	ճիւղ ւե ոյր	ճիւղ ւե ոյր
66	4	շնգ-ն-ն իւր ր-ն-ն	շնգ-ն-ն իւր ի-ր-ն
67	45	. . . ի-ր-ն-ն	ճ-ն-ն ի-ր-ն-ն
74	4	յ-յ-ն իբ իե	յ-յ-ն իբ իե

